

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՎԵՐՋԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՌԹԻ

Քարիֆոռնիոյ նահանգային խորհրդարանի 43-րդ ընտրաշրջանէն ներս կայացած նախնական ընտրութիւններու ընտրաքաղաքի ընթացքին, պարզուեցան այնպիսի երեւոյթներ ու գործադրուեցան այնպիսի արարքներ, որ մեր համայնքէն ներս առաջացուցին անտեղի լարուածութիւն եւ պառակտում:

Այս առթիւ Հայ Ամերիկեան խորհուրդը կու գայ յայտնելու. - Ա.- Կը շնորհաւորենք Պր. Փոլ Գրիգորեանը՝ իր յաղթանակին առթիւ, յաջողութիւն կը մաղթենք իրեն նոյն միջոցով ընդհանուր ընտրութիւններուն եւ պատրաստակամութիւն կը յայտնենք գործակցելու իր հետ:

Բ.- Կը դատապարտենք ընտրաքաղաքի ժխտական բոլոր տեսակի դրսեւորումները, յատկապէս California Latino Leadership Fund-ի կողմէ տարածուած թոռուցիկը:

Գ.- Դատապարտելի եւ մտահոգիչ կը գտնենք ի բացակայութեան ընտրելու իրաւունքի (Absentee ballot), դիմումներու ստորագրութիւնները կեղծելու փաստը, որուն անմիջական գոհը դարձաւ շրջանիս հայ համայնքը: Այս առթիւ՝ ՀԱԽ-ը դիմած է Լ.Ն.Ս.Ա.Ս.Ն. լրսի դատախազութեան այս հարցը հետապնդելու եւ սոյն արարքներու հետեւեալները պատասխանատուութեան ենթարկելու:

Դ.- Դատապարտելի կը գտնենք ընտրաքաղաքի ընթացքին, որոշ անհատներու եւ կազմակերպութիւններու կողմէ՝ յօդուածներու եւ հեռատեսիլի հաղորդումներու միջոցաւ կատարուած զրգոյի արտայայտութիւնները եւ պիտակաւորումները, որոնք անցնելով պատշաճութեան ամէն սահման եկան ստեղծելու այնպիսի բացասական մթնոլորտ մը, որ անտարակոյս նպաստեց հայ Բուէրկոնցներուն ակնկալուած թիւէն շատ ակնկալուած մասնակցութեան:

Ե.- Մեր գորակցութիւնը կը յայտնենք Հեռատեսիլի հաղորդավար՝ Պր. Վրէժ Աղանեանեանին, իր դէմ կատարուած յարձակումին առթիւ եւ դատական մարմիններէն կը պահանջենք յայտնեցաքերելու պատժել պատասխանատուները:

Կը յուսանք, որ ընտրական կիրքերը կը հանդարտին, մեր համայնքը կը վերագտնէ իր անդորրը եւ ապագայի ընտրական գործընթացներուն բոլոր կը մասնակցին մոլորակներու եւ փոխհանդուրժողութեան մթնոլորտի մէջ, ի շահ հայ համայնքի բարօրութեան եւ համերաշխութեան:

ՀԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԵՐՈՊԱ ԴԱՐՁԵԱԼ ԿԸ ՅԻՇԵՑՆԷ ԱԶԱՏ ԵՒ ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի իշխանութիւններուն եւ ընդդիմադիր ներկայացուցիչներուն հետ հանդիպումներ ունենալէ ետք Ազգային յանձնախմբի ղեկավար, Գերմանիայի ներկայացուցիչ Ռոլանդ Ուեկենըրը, որ կը հսկէ Եւրոպայի հանդէպ Հայաստանի ստանձնած պարտաւորութիւններու կատարման, նախարար Վարդան Օսկանեանի հետ միասին հանդիպեցաւ լրագրողներուն:



Ազգային յանձնախմբի ղեկավար Ռոլանդ Ուեկենըրը Երեւանի մէջ կայացած մամուլայաւուլիսի ընթացքին

Ըստ Վարդան Օսկանեանի, քննարկուած հարցերու օրակարգը բաւականին ընդգրկուած էր՝ երկրի իրաւական դաշտը սահմանադրական փոփոխութիւններուն համապատասխանեցնելու նպատակով օրէնսդրական փոփոխութիւններէն մինչեւ դարաբաղեան հարցի կարգաւորումը:

Դեպքան Ուեկենըրը յիշեցուց, որ իրենց նպատակն է ստուգել՝ Եւրոպային խորհուրդին անդամակցութեան ժամանակ Հայաստանի ընդունած պարտաւորութիւններու կատարումը եւ կարեւոր նկատեց օրէնսդրական բարեփոխումները՝ յատկապէս իրաւապահ համակարգի անհրաժեշտը:

Երկու տարուայ ընթացքին պէտք է փոխուին 67 օրէնքներ, բայց Ազգային խումբի ղեկավարը առանձնացուց ոստիկանութեան մասին, ոստիկանութեան կարգապահական կանոնադրութիւնը, քրէակատարողական ծառայութեան մասին, քաղաքացիական դատավարութեան օրէնսդրութիւնը, դատախազութեան մասին, մարդու իրաւունքներու պաշտպանի մասին, այլ ընտրանքային ծառայութեան մասին օրէնքներու փոփոխութիւնները: Ան կարեւոր նկատեց նաեւ Երեւանի մասին օրէնքի ընդունումը եւ Տեղական ինքնակառավարման Մարմիններու օրէնքի փոփոխութիւնը:

Դեպքանը յայտնեց, որ իշխանութիւններուն հետ քննարկուած է նաեւ 2007 թուականի ընտրութիւններու հարցը եւ կարեւոր նկատեց այդ ընտրութիւնները եւրոպական չափանիշներով կայացնելու անհրաժեշտութիւնը: Եւրոպացի դիւանագետը չուզեց պատասխանել, թէ նախորդ ոչ Շաբ.ը էջ 4

ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒՅԻՆ ԿԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԷ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԶՈՒՄԸ

Պաշտօնական այցով Հայաստան գտնուող Զուիցերիոյ Արտաքին Գործոց նախարարուհի Միշէլին Քալմի Ռէյ Երկուշաբթի, Յունիս 12-ին վերահաստատած է 1915 թուականին Օսմանեան թուրքիոյ կողմէ հայերու սպանող որպէս «ցեղասպանութիւն» ճանչնալու մասին իր երկրի որոշումը:

«Հայաստանը Զուիցերիոյ մէջ համակրանքի շատ մեծ դրամազուլուս ունի», - լրագրողներու հետ հանդիպման ընթացքին լսած է Միշէլին Քալմի Ռէյ: «Հայերու ցեղասպանութիւնը Զուիցերիոյ մէջ ճանչցուած է տարբեր մակարդակներով՝ ե՛ւ համապետական, ե՛ւ գանձոններու, ե՛ւ քաղաքներու մակարդակով»:

Ան աւելցուց, որ Զուիցերիան «պարբերաբար ջանքեր կը գործադրէ հայ-թրքական յարաբերութիւններու բարելաւման ուղղութեամբ»:

Զուիցերիոյ կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման յաջորդեց թուրքիոյ հետ փոխյարաբերութիւններու մէջ որոշ լարուածութիւն: Երկու երկիրներու միջեւ յարաբերութիւնները, ըստ Միշէլին Քալմի Ռէյի, այժմ լաւ են:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՊԻՏԻ ԱՅՑԵԼԷ ԹՈՒՐՔԻԱ

«Հայկական Ժամանակ» օրաթերթը Յունիս 13-ի իր թիւով կը հաղորդէ, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատուական գրասենեակը հաստատած է այն տեղեկութիւնները, որ Նորին Սուրբ Օծու թիւն Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսը Յունիս 20-ին պաշտօնական այցով պիտի մեկնի Պոլիս:

Վեհափառ Հայրապետը պիտի հիւրընկալուի ոչ թէ թրքական իշխանութիւններու կողմէ, այլ Յոյն Ուղղափառ Բարթողիմէոս Ա. Տիեզերական Պատրիարքին, որուն հետ հանդիպումը կը նկատուի Ամենայն Հայոց կաթողիկոսին այցի գլխաւոր իրադարձութիւնը:

Բացի այդ, Գարեգին Բ. հովուապետական այցով պիտի գտնուի Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը:

Էջմիածնի կողմէ առայժմ չեն հաստատուած որեւէ տեղեկութիւններ այն մասին, թէ Գարեգին Բ. հանդիպումներ պիտի ունենայ թէ ոչ, թրքական պաշտօնական շրջանակներու հետ:

ՀԱՆՐԱՔՈՒԷԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԻԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԻ ՀԱՄԱՐ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԾՈՒՂԱԿ Է

ԼՂՀ Արտաքին Գործոց նախարարութեան պաշտօնական կայքէջին վրայ տեղադրուած «Ժողովրդագրական ծուղակ» վերնագրով հրատարակման մէջ կ'ըսուի թէ, Լեւոնային Ղարաբաղի կարգավիճակի որոշման նպատակով նոր հանրաքուէի կայացման համաձայնիլը հայկական կողմի համար կը նշանակէ հրաժարիլ 1991-ի հանրաքուէի օրինաւորութեան եւ արդիւնքներու ճանաչումէն:

«Եթէ հայկական կողմը համաձայնի յետաձգուող հանրաքուէի գաղափարին, ապա համաձայնագրի ստորագրումից յետոյ ո'չ ՀՀ-ն, ո'չ առաւել եւս ԼՂՀ-ն չեն կարող խանգարել Ատրպէյճանին «խաղաղապահներ» ծածկոյթի տակ եւ «փախտականներ» վերադարձից յետոյ փոխել ժողովրդագրական իրավիճակը ԼՂՀ-ում, դիւրեւսիններ, սաղրանքներ եւ ազգամիջեան բախումներ կազմա-

կերպել՝ իրավիճակի հետագայ սրման եւ ԼՂՀ հայ բնակչութեան վրայ ճնշում գործադրելու նպատակով», - ըսուած է ԼՂՀ ԱԳՆ պաշտօնական կայքէջի հրատարակման մէջ:

Ըստ նոյն աղբիւրի, եթէ նոյնիսկ հանրաքուէն կայանայ, ապա անոր նախորդող ժամանակաշրջանին Լեւոնային Ղարաբաղի ժողովրդագրական պատկերը կը փոխուի յօգուտ Ատրպէյճանի, եւ քուէարկութեան արդիւնքները վստահաբար կ'ըլլան ի նպաստ անոր «տարածքային ամբողջականութեան»:

Հրատարակումը կը յայտնէ թէ, որոշ եւրոպական կառույցներ դարաբաղեան կարգաւորման հարցով առաջ կը տանին իրենց շահերը, «Որոնք իրականում միշտ քաղաքականութիւններով համապատասխանում են ատրպէյճանականին»:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՍԵՐԺԸ, ԹԵՐԵԻՍ, ՌԻՇԱՑԱԻ

Հայաստանում, թեև և՛, իսկապես ամեն ինչ փոխուում է: Չնայած նրան, որ իշխող վարչակարգը հաճախակի փոխվում է, որ կոալիցիայից Օրինաց Երկրի դուրս գալը երկրում չի փոխել ոչինչ, թերեւս ինքն էլ չի հաւատում իր խօսքին: Չի հաւատում, քանի որ տեսնում է, թէ ինչ է կատարում հայրենի քաղաքական ուժերի շրջանում:

Առաջին հերթին, աւելի ու աւելի է հիացնում բոլորին իշխող վարչակարգի ներկայ առանցք Հանրապետական կուսակցութեան ներառյալին է քապանսիան: Այդ չինովնիկական համախմբի հետ ինչ որ բան հաստատ տեղի է ունենում: Սկսեցին ուսուցիչների վարչական տեւորը, սկսեցին պետական բււշէն ցանել մարզերում (Իհարկէ, միայն խոստումներով): Ասում են, նոյնիսկ, որ մտադիր են նժդեհականութիւնից հրաժարուել ու ընդունել լիբերալ-դեմոկրատական գաղափարախօսութիւն:

Բայց ամենից աւելի գրաւում է այն, որ Հանրապետականները աւելի ու աւելի բարձր են սկսել բղաւել՝ ու՞ր է այդ Սերժ Սարգսեանը եւ ինչու մինչեւ հիմա չի յայտարարում, որ կը գործակցի միայն իրենց կուսակցութեան հետ: Իսկ Սերժը լուծ է: Լուծ է, որովհետեւ գիտէ, որ Հանրապետականների գնացքը արդէն մեկնել է: Աւելին, թերեւս մտածում է, թէ ինքը որտեղ է նստած լինելու 2007 թուականից յետոյ: Եւ ճիշդ էլ անում է, քանի որ բանը միայն Արթուր Բաղդասարեանի հրաժարականը չէ:

Չէ որ տեսնում են բոլորը, որ ոչ միայն ընդդիմադիր դաշտն է կորսուած: Գազիկ Ծառուկեանն իր ընդգրկուն մարմնով գբաղեցնում է Հայաստանի քաղաքական դաշտի մնացեալ տարածութիւնը: Արթուր Բաղդասարեանից մնացածը կը վերցնի Գազիկ Ծառուկեանը: Իսկ Հանրապետականները: Հանրապետականները, ինչպէս ասում են՝ «մնացին փշալարից կախուած»: Եւ ուրեմն Սերժի ինչին են նրանք պէտք: Սերժին շատ ձայն է պէտք, որպէսզի Քոչարեանին ցոյց տայ իր ամենակարողութիւնը: Իսկ որտե՞ղ գտնել այդ ձայները: Չէ որ ոչ ոք դրանք հենց

այնպէս չի բաժանում: Իսկ փոխարէնը Սերժին ինչ պէտք է տայ դաշնակիցներին: Ոչինչ:

Միայն այժմ «սուպերնախարարը» հասկացաւ, որ առանց Ռոբերտ Քոչարեանի ինքը ոչինչ է: Եւ միշտ էլ ոչինչ է եղել: Կը նստեցնի բազմոցին՝ կը նստի, չի նստեցնի, կը մնայ միայն արտասուել: Հմայեակի համար է ինքը հեղինակութիւն եւ Ֆուշէ, իսկ Ռոբերտ Քոչարեանի համար հեղինակութիւն չկայ, սեփական անձից բացի: Քոչարեանին ամենից շատ հետաքրքրում են նրանք, ովքեր կարող են ինքնուրոյն ձայներ հաւաքել, օրինակ, ահա, Ծառուկեանը: Եւ մէկ էլ Արթուր Բաղդասարեանը, ում հաւաքած ձայները կարող են տհաճ խնդիրներ յարուցել իր համար: Իսկ Սերժին ինչ, թող իր համար ներշնչի բոլորին, թէ իր ձեռքն ամենահաս է: Ի վերջոյ, դրա երկարութիւնն ամենից լաւ Քոչարեանը գիտէ:

Իսկապէս, շատ ուշ հասկացան նախկին դաշնակիցներ Սերժն ու Անդրանիկը, թէ ինչ տեղի ունեցաւ Հայաստանում: Իսկ նրանք, ովքեր մինչ այժմ շարունակում են հարցնել՝ «երբ կը մտնի Սերժը Հանրապետականի ցուցակ», ընդհանրապէս ոչինչ չեն հասկացել: Չեն հասկացել, որ Հայաստանում ամէն ինչ այսուհետ որոշուելու է բոլորովին այլ ցուցակներում, այնտեղ, ուր «սուպերնախարարն» առանց թոյլտուութեան տեղ չունի: Իսկ ինչու այդպէս, ահա դա շատ հետաքրքիր է: Այդ մասին ոչ մէկին չեն ասում, նոյնիսկ Սերժին:

Ինչ է մնում անել Հայաստանի «շատ ուժեղ» մարդկանց: Սուպերնախարարին, Գլխաւոր դատախազին ծառեր տնկել, շախմատ նայել, մշակել՝ ազգային անվտանգութեան ռազմավարութիւն, ձկնաբուծութեան ծրագրեր յղանալ, եւ այդ ամէնը տասը տարուայ ընդգրկումով: Այո, չիրականացած երազի տասը տարիներ: Գուցէ Քոչարեանը հաւատայ, որ այդ տղաներն ինչ որ բան արժեն: Ուշ է, ինչպէս թեւում է: Եւ դեռ ասում են, թէ Հայաստանում ոչինչ չի փոխուել:

ՄԵԼԻՔ ԵՍԱՅԵԱՆ
«ԼՐԱԳԻՐ»

ՔՐԵԱԾԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Երեւում է՝ Ադրուան Յովսէփեանի գործերն իսկապէս լաւ չեն: Դաշնակիցների հետ ինտենսիվ փոխհարաբերութեան աղմուկը դեռ չլուծւած՝ հիմա էլ արդարադատութեան նախարարն է կենաց-մահու պայքարի ելել դատախազութեան դէմ: Երեւի Դաւիթ Յարութիւնեանին շատ է ոգեւորել դաշնակիցների յայտարարութիւնը, թէ «այդպիսի՞ դատախազներ են եկել-գնացել»: Եւ ահա Դաւիթ Յարութիւնեանը մտածել է, թէ պահը շատ յարմար է Ադրուան Յովսէփեանին «դաբիտ անելու» համար:

Բանն այն է, որ արդարադատութեան նախարարութիւնը լրջօրէն պատրաստուած է հպաքսնուագեցնել դատախազութեան լիազօրութիւնները: Մասնաւորապէս՝ հասնել նրան, որ դատախազութիւնը զբաղուի բացառապէս պետական շահերի պաշտպանութեամբ, իսկ նախաքննութիւնն իրականացնեն իրաւապահ մարմինները (ոստիկանութիւնը): Հասկանալի է, որ եթէ սա իրականութիւն դառնայ, դատախազութիւնը կը վերածուի շարքային պետական հիմնարկի, այսինքն՝ բնապահպանութեան նախարարութեան պէս մի բան կը դառնայ:

Ադրուան Յովսէփեանը, բնականաբար, դիմադրում է: Ընդ որում, առաջնորդում է «լաւագոյն պաշտպանութիւնը յարձակումն է» սկզբունքով եւ ներկայումս լայնամասշտաբ ստուգումներ է իրականացնում հենց արդարադատութեան համակարգում: Աւելին՝ մեր տեղեկութիւններով, արդէն իսկ մի քանի քրէական գործեր են յարուցուել, եւ այդ գործերով «անցնողները» Դաւիթ Յարութիւնեանի մերձաւորագոյն շրջապատից են եւ համարում են նրա ամենահաւատարիմ մարդիկ: Իսկ Դաւիթ Յարութիւնեանն իր հերթին զբաղուած է խորհրդարանում լրբբինգ իրականացնելով, որպէսզի խորհրդարանը հաւանութեան արժանացնի դատախազութեան լիազօրութիւնները սահմանափակելու նախագծերը: Բանն այնտեղ է հասել, որ այս առձակատումը մի քանի օր առաջ «լսումների է արժանացել» նաեւ Քոչարեանի եւ ուժայինների խորհրդակցութեան ժամանակ:

Թէ ինչով կը աւարտուի այս առձակատումը՝ դժուար է ասել:

կարեւորող հարցուածների 92,5%-ը պատկանում է իրական սեռին: Մենք խնդրեցինք APR Group-ին նոյն հարցման շրջանակներում հետաքրքրուել նաեւ, թէ ինչ են մտածում երեւանցիները Ռուսաստանում հայերի հանդէպ իրականացուող բռնութիւնների մասին: Նախ նշենք, որ հարցուածների 35%-ը դրա մասին տեղեկ չէր կամ այդ խնդրով չէր հետաքրքրում: Իսկ այդ բռնութիւնների պատճառների վերաբերեալ կարծիքները տարբեր են: 27,8%-ը կարծում է, որ դա Ռուսաստանի վարած քաղաքականութիւնն է, 19,8%-ը համոզուած է, որ դրանք պատահական դէպքեր են, 16%-ը դա վերագրում է ուսական շփոխիւմին, իսկ 15,1%-ի կարծիքով հայերի դէմ ոտնձգութիւնները այլ պետութիւնների սաղրանք են՝ ընդդէմ հայուսական յարաբերութիւնների:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
«ԱՌԱԻՕՏ»
6-13-06

Չուտ պետութեան շահերի տեսանկիւնից, իհարկէ, ճիշդ կը լինէր, եթէ հաւասարապէս կոտուածպացուած այս երկու կառույցների դեկավարներն էլ յայտնուէին այնտեղ, որտեղ իրենց իսկական տեղն է. այսինքն՝ իրենց նախկին կոլեգաների հսկողութեան տակ: Բայց ամէն ինչ, իհարկէ, այլ կերպ տեղի կ'ունենայ: Եւ իրադարձութիւնների գարգացման վրայ ամենայն հաւանականութեամբ մեծապէս կ'ազդեն այն հանգամանքները, որ նախ՝ Դաւիթ Յարութիւնեանը չափազանց մտերմիկ յարաբերութիւնների մէջ է իշխանութիւնների հետ, երկրորդ՝ Քոչարեանին ու նրա շրջապատին վաղուց են ներդրալանցնում Ադրուան Յովսէփեանի նախագահական «գամաշկաները» (շուրջպար, ծառատունկ եւ այլն), եւ երրորդ՝ «Միաւորում Յանուն Հայաստանի» կուսակցութիւնում Ադրուան Յովսէփեանի «գամենը» կարծես գտնուած է (կարէն կարապետեանի մասին է խօսքը):

Այլ հարց է, որ իշխանութիւնները հազիւ թէ նպատակաշարմար համարեն այս պահին շատ նեղել կամ նոյնիսկ պաշտօնանկ անել Ադրուան Յովսէփեանին: Առանց այն էլ գլուխները խառն է: Մանաւանդ որ Դաւիթ Յարութիւնեանին շատ մեծ նշանակութիւն տալն էլ մի բան չէ: Ժամանակին նրա անունը նոյնիսկ քննարկուել է որպէս վարչապետի հաւանական թեկնածու, իսկ նման բաները չեն ներուած:

Մի խօսքով, Հայաստանում ստեղծուել է մի եզակի վիճակ, երբ դաշնակիցների եւ արդարադատութեան շահերը համընկնում են: Այս աս՝ պէտք էր գրանցել Գինէսի ռեկորդների գրքում, ոչ թէ շուրջպարը:

ԴԱԻԹ ԱԻԱԳԵԱՆ
«ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕԹԹ. ԱՐՇԱԿ ՂԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ՍԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ
ՍԱՅԱ ԹՈՒԹՃԵԱՆ
ՎԱԶԳԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐԻԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ
Յեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party of
Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

**ԱԺՈՎ, ԴԱՐԱԲԱՂՈՎ ԵՒ ԴՈԼԱՐՈՎ ՉԵՆ
ՅԵՏԱՔՐՔՐԻՈՒՄ**

Եթէ դուք կարծում եք, որ հայաստանցիներին անչափ յուզում են Աժ նախագահի հրաժարականը, Բուխարեստում դարաբաղեան բանակցութիւնների հերթական ձախողումը կամ դոլարի արժեզրկումը, ապա չարաչար սխալուում էք: Յամենայնդէպս, «Առաւօտի» պատուէրով անցկացրած APR Group ընկերութեան հեռախօսային հարցման համաձայն (հարցումն իրականացուել է Յունիսի 7-9-ը՝ 652 երեւանցիների մէջ), այդ ամէնը մեր համաքաղաքացիներին բաւականին քիչ է յուզում: Սոցիոլոգները խնդրել են բնակիչներին նշել վերջին շրջանի երեք կարեւորագոյն իրադարձութիւնները, եւ նրանց 37%-ն առաջին տեղում է դրել Թուրքիի շախմատային օլիմպիադայում հայ շախմատիստների յաղթանակը, 24,8%-ը՝ A320 անորոշուի վթարը, 22,9%-ը՝ «Եւրատեխնոլոգ» Անդրէի յաջողութիւնը: Վերը յիշատակուած քա-

ղաքական կամ «քաղտնտեսական» իրադարձութիւնները հաւաքել են 5%-ից պակաս: Եւ նոյնիսկ Ռուսաստանում հայերի հանդէպ յաճախակի դարձած բռնութիւնները, որպէս կարեւորագոյն իրադարձութիւն՝ առաջին տեղ է դրել հարցուածների ընդամէնը 5,4%-ը: Չէի շտապի այս արդիւնքների հիման վրայ մարդկանց մեղադրել «անջիգեար» կամ «լիւմպենացուած» լինելու մէջ: Գուցէ պատճառն այն է, որ 15 տարուայ ընթացքում մարդիկ համոզուցին, որ քաղաքականութեան վրայ ազդելու որեւէ լծակ չունեն, իսկ հետաքրքրուել մի բանով, որը քեզ հետ ոչ մի կապ չունի՝ առնուազն խելամիտ չէ: Ի դէպ, նշելով շախմատիստներին եւ Անդրէի կարեւորելու պատճառը, հարցուածների համապատասխանաբար 54,8 եւ 19,5%-ը ասացին, որ դա հայ ազգի հպարտութիւնն ու պատիւն է: Հետաքրքիր է նաեւ, որ Անդրէին

ԼՈՒՐԵՐ

«Ո՞Վ Է ՊԱՏԱՍԽԱՆ ՏԱԼՈՒ ՈՍԿՈՒ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ՉԱՄԱՐ»

Ընդդիմադիր պատգամաւորները շատ յաճախ են չիշոււմ կենտրոնական Բանկի ոսկու պաշարների մսխման փաստը: Յունիս 13-ին էլ խորհրդարանում, օգտուելով յարմար պահից, երբ ԿԲ նախագահը ներկայացնում էր 2005 թուականի հաշուետուութիւնը, «Արդարութիւն» խմբակցութեան քարտուղար Վիկտոր Դալլաքեանը յայտարարեց, որ գարգացած երկրները ընդգրկվալին ֆոնդերում ոսկի են հաւաքում, իսկ Հայաստանի ԿԲ-ն ոսկու պաշարները վաճառել է: «Ո՞վ է պատասխան տալու ոսկու պաշարների վաճառքի համար»:



Հայաստանի Կենտրոնական Բանկի նախագահ Տիգրան Սարգսեան

Պատասխանելով ԿԲ նախագահ Տիգրան Սարգսեանը տեղեկացրեց, որ ԿԲ-ը ոսկու վաճառքից ստացել է մեծ շահույթ՝ շուրջ 3 մլրդ դրամ: «2003 թուականին է իրականացուել այդ գործարքը. փորձ է կատարուում հասարակութեանը թիւրիմացութեան մէջ գցել, որ Հայաստանը մեծ կորուստներ է ունեցել, այդպէս չէ:

որը ոչ մի հական նշանակութիւն մեր ժողովրդի համար չունի եւ չէր էլ կարող ունենալ», - պարզաբանում է ԿԲ նախագահը եւ աւելացնում, որ ոսկու գնի տատանողականութիւնը չափազանց մեծ է եւ այն երկիրները, որ ունեն աւելի մեծ արտաքին պարտք, քան համախառն արտաքին ակտիւները, այդ երկրները ոսկին որպէս ակտիւների կառավարման արտարժույթի միջոց, չեն պահում, աւելին հարուստ երկրները իրենց համախառն արտաքին ակտիւներում ոսկին չեն հաշուառում. ոսկին իրականացնում է հարստութեան կուտակման ֆունցիա:

ԿԲ-ն վաճառել է ոսկին, որովհետեւ անհրաժեշտ էր այդ պահին ապահովել 3 մլրդ դրամի եկամուտ, որովհետեւ մենք պլանաւորուած գումարներ պէտք է փոխանցէինք բիւջէ, բիւջէն պէտք է ծախսեր կատարէր», - լրագրողների հետ գրոցում ասաց ԿԲ նախագահ Տիգրան Սարգսեանը:

«Ոսկի իմաստ ունի ունենալ այն պարագայում, երբ ձեր համախառն արտաքին ակտիւներն աւելին են, քան ձեր պարտքերը: Մեզ մօտ այդպիսին չէ իրավիճակը. մեր արտաքին պարտքը շատ աւելի մեծ է եւ ոսկի կուտակելու մասին դեռեւս վաղ է երազել, եւ այդպիսի անհրաժեշտութիւն չէ մօտակայ տարիների չի ունենալու»:

«Ոսկու պաշարները մեր համախառն արտաքին ակտիւի մէջ չնչին մաս է կազմում. մենք այսօր ունենք շուրջ 770 մլն դոլարի համախառն արտաքին ակտիւներ, իսկ ոսկին կազմում էր ընդամենը 15 մլն դոլար, եւ այդ 15 մլն դոլարի շուրջ փորձում են սպեկուլեացիաներ անել,

«ԱՐՄԱԻԱ»-Ի ԳԼԽԱԻՈՐ ՏՆՕՐԵՆԸ ՎՍՏԱՅ Է, ՈՐ «ԱՄԵՆ ԻՆՉ ԿԸ ԲԱՅԱՅԱՅՏՈՒԻ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: «Արմաիա» ընկերութեան գլխաւոր տնօրէն Նորայր Բելոեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ հարցազրոյցում ասաց, թէ հնարաւոր է, որ մէկ շաբաթ յետոյ ինչ-որ տեղեկատուութիւն լինի ինքնագրիչների վերծանման աշխատանքների կապակցութեամբ:

դուհանդերձ կտրականապէս հերքելով, թէ վթարի պատճառը վառելիքի պակասն է եղել:

Չնայած արդէն մէկ շաբաթ է, ինչ աղէտի ենթարկուած A320-ի ինքնագրիչներում արձանագրուած խօսակցութիւնները վերծանուել են, սակայն ո՛չ այդ խօսակցութիւնների բովանդակունութեանը եւ ո՛չ էլ աղէտի պատճառներին վերաբերող որեւէ տեղեկատուութիւն չի տրամադրուում:

Բելոեանի վատահեղմամբ, ոչ ոք վթարի պատճառները թաքցնելու միտում չունի եւ «ամէն ինչ վաղ թէ ուշ կը բացայայտուի»: - «Երբ կը լինի դա՛ չեմ կարող ասել, բայց այն, որ կ'ատուի ամէն ինչ, եւ համոզուած եմ»:

«Մէկ շաբաթից միզուցե ինչ-որ տեղեկութիւն կը լինի», - ասաց Բելոեանը: - «Ոչ թէ վթարի (պատճառներ) մասին... Ես համոզուած եմ, որ դա չի լինի, որովհետեւ շատ շուտ է դեռ: Բայց ես մտածում եմ, որ կարող է ամէն շաբաթ բերի ինչ-որ տեղեկատուութիւն»:

Մայիսի լոյս 3-ի գիշերը Սոչիի օդանաւակայանի մօտակայքում վթարուած հայաստանեան ինքնաթիռի գոհերի հարազատները, մինչդեռ, վաղը Երեւանից աւտոբուսներով ուղեւորուելու են Սոչի. նրանք ցանկացել են իրենց հարազատների մահուան 40-րդ օրը լինել աղէտի վայրում:

«Ես ունեմ ինֆորմացիա, որ այդ արկղերը նորմալ վիճակում են եւ կարգալ լինում է, բայց՝ ի՞նչ է արձանագրուել, ի՞նչ է գրուած, ի՞նչ են կարդացել. դրանով զբաղուած է յանձնաժողովը», - յաւելեց նա՝ այ-

Ուղեւորութիւնը կազմակերպել է Ռուս-հայկական գործարար համագործակցութեան ընկերակցութիւնը, որի համանախագահ, Ազգային ժողովի պատգամաւոր Վլադիմիր Բադալեանը «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեց. - «Յունիսի 14-ին մենք պատուիրել ենք նաւ, որով դուրս կը գանք ծով՝ աղէտի վայրը... Իսկ երեկոյեան ժամը 7-ին Ադլերի եկեղեցում կը լինի պատարագ գոհուածների չիշատակին»:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ ԱԻԵԼԱՑՐԵԼ Է 23 ՏՈՒՆՈՒՎ, ԱՏՐՊԵՅՃԱՆԸ՝ 51

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Անցած տարի Հայաստանը իր ռազմական ծախսերն աւելացրել է 23 տոկոսով, իսկ Ատրպէյճանը՝ 51 տոկոսով: Այս տուեալներն է բովանդակում Ստոկհոլմի Խաղաղութեան միջազգային հետազոտութիւնների ինստիտուտի՝ երէկ հրատարակած տարեկան զեկոյցը:

Ռազմական ծախսերի ամենամեծ աճն աշխարհում ունի Վրաստանը՝ 143 տոկոս: Այդ երկրի ռազմական ծախսերը կազմել են 146 միլիոն դոլար:

Ըստ «Ռոյթըրզ»-ի, զեկոյցի հեղինակները նշում են, որ «պաշտօնական բացատրութիւնն այն է, որ Վրաստանը ցանկանում է դառնալ ՆԱՏՕ-ի անդամ, մինչդեռ ոմանք պնդում են, որ Թբիլիսին ձգտում է վերականգնել վերահսկողութիւնը Աբխազիայի եւ Հարաւային Օսիայի նկատմամբ»:

«Նաւթի համաշխարհային գների աճը թոյլ է տուել որոշ երկրների՝ այդ թւում Ալժիրին, Ատրպէյճանին, Ռուսաստանին եւ Սաուդեան Արաբիային, մեծացնել ռազմական ծախսերը», - ասուած է փաստաթղթում:

Զեկոյցի հեղինակների կարծիքով՝ ռազմական ծախսերը ողջ աշխարհում 2006 թուականին շարունակելու են աճել:

«ԷԿՈՆՈՄԻՍ» . «ՀԱՅԿԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԽԱՂԱԴԱՇՏ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Լոնդոնեան «Էկոնոմիստ» հանդէսի հետազոտական յաւելումը ամփոփել է Հայաստանի տնտեսական դաշտում ընթացող վերջին զարգացումները՝ պնդելով. - «Տարեցտարի հայկական շուկայում աւելի ու աւելի ծանրակշիռ դիրք են զբաղեցնում ռուսական բիզնես կառույցները»:

եւ յիշեցնում է, որ այսօր հենց ռուսական խոշոր ընկերութիւններն են, որ Հայաստանում տնօրինում են էլեկտրական բաշխիչ ցանցերը, գազ մատակարարող «Հայուսգազարդ» ընկերութիւնը, «Արմենալ»-ը, Հրազդանի ԶէԿ-ի 5-րդ բլոկը:

Յունական OTE-ի՝ հայկական շուկայից հեռանալուց յետոյ կը մնայ ընդամենը մէկ խոշոր ոչ ռուսական օտարերկրեայ ներդրող՝ «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի» սեփականատէր գերմանական «Կրոնիմետ» ընկերութիւնը», - գրում են «Էկոնոմիստ»-ի վերլուծաբանները:

«Եթէ ռուսական ընկերութիւնները յաղթեն նաեւ «Արմենալ»-ի մրցոյթում, Հայաստանեան տնտեսութեան գրեթէ բոլոր ակտիւները կը յայտնուեն ռուսական կապիտալի ձեռքում», - գրում է բրիտանական հեղինակաւոր պարբերականի յաւելումը:

Ըստ «Էկոնոմիստ»-ի՝ 1992 թուականից հայաստանեան տնտեսութիւնում ռուսական կապիտալի ներդրումների ծաւալը մօտ 400 միլիոն դոլար է կազմել: Այս թուի ուղիղ կէսը արձանագրուել է 2004-2005 թուականների ընթացքում: Այսպիսով, ըստ «Էկոնոմիստ»-ի, միջազգային բիզնես հանրութիւնը սպասում է, թէ ո՞վ է լինելու Հայաստանի հեռահաղորդակցութեան առաջատար ընկերութեան սեփականատէրը՝ միաժամանակ արձանագրելով. - «Այսօր Հայաստանի վերաբերմունքը ներդրողների հանդէպ կանխորոշուած է երկրի արտաքին քաղաքականութեան եւ անվտանգութեան ասպարէզներում որդեգրած ուղեւորը»:

«Այսօր Հայաստանի վերաբերմունքը ներդրողների հանդէպ կանխորոշուած է երկրի արտաքին քաղաքականութեան եւ անվտանգութեան ասպարէզներում որդեգրած ուղեւորը»:

«Էկոնոմիստ»-ի յաւելումը նա-

ՆԱԽԱՆՇԻՈՒՄ ԵՆ ՄԵՍԻՏԵԹՅԻ ԹՈՒՐԲԵՐԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՎԱՅՐԵՐԸ

Վրաստանի հակամարտութեան կարգաւորման հարցերով պետնախարարի մեսիսեթցիւնների հայրենադարձութեան հարցերով խորհրդական Թէյմուրազ Լոմսաձէի կարծիքով հայրենադարձող մեսիսեթցի թուրքերի բնակավայրերի մեծ մասը փրատակների է վերածուել եւ դրանք վերականգնելը մեծ ծախսեր կը պահանջեն:

Պետնախարարի խորհրդակցանը նշում է, որ բացի փլատակների վերածուելուց այդ բնակավայրերը նաեւ հողից աղքատ են եւ թուրքերին պէտք է վերաբնակեցնել աւելի յարմար բնակավայրերում: Նշենք, որ մեսիսեթցիների բնակավայրերի մեծ մասում վերաբնակեցուել են Վրաստանի տարբեր շրջաններից եկած վրացիներ, իսկ աւերակների վերածուած բնակավայրերի հողերը եւս տրուել է նրանց:

ԵՐՐՈՂԱ ԿԸ ՅԻՇԵՑՆԷ

Շարունակուած էջ 1-էն
այնքան եւրոպական ընտրութիւններէն յետոյ Եւրոպայի ներկայացուցած պահանջներէն քանին կատարած է Հայաստանը, սակայն անանգամ մը եւս հաստատեց, որ եւ օրէնսդրական փոփոխութիւններու, եւ ազատ, արդար ընտրութիւններու հարցով Եւրոպան պատրաստ է աջակցելու Հայաստանին: Որպէս աջակցութիւն Եւրոպան արդէն կառավարութեան փոխանցած է մշակման տակ գտնուող շարք մը նախագիծեր՝ որոնց շարքին ընտրական օրէնագրքի վերաբերեալ փորձագիտական եզրակացութիւններ: Դեպքան Ուեկենըր սակայն

յախնեց, որ Եւրոպական կառույցները կրնան միայն աջակցել, քանի որ բնականոն ընտրութիւններու համար ոչ միայն լաւ օրէնք պէտք է, այլ՝ քաղաքական ուժերու պատասխանատուութիւն՝ «այս հարցով պէտք է բոլորը համագործակցին»:
Խօսելով մամուլի «Ա.1+» հեռատեսիլի փակման եւ բազմակար-

ծու թեան մասին, Գերմանացի դիւանագէտը յայտարարեց.-«Մենք «Ա.1+»-ի հարցը այստեղ բարձրացուցած ենք մեր բոլոր հանդիպումներու ժամանակ: ԶԼՄ-ների բազմակարծութեան ապահովում ըսելով մենք նկատի ունինք «Ա.1+»-ի խնդիրը: «Ա.1+»-ի խնդիրը կը շարունակէ մնալ մոնիտորինգի խումբի ուշադրութեան կենտրոնը»:

ԲԱՂԱԲԱԿԱՆ

ԻՐԱՆԵԱՆ ԹՆՃՈՒԿԸ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՂՐԵԱՆ

Ամերիկայի Միացեալ Նահանգներու գլխացաւերը, յատկապէս այս օրերուն, բազմազան եւ տեսակաւոր են: Երկրին ղեկավարութիւնը, նախագահ Պուշի առաջնորդութեամբ, անկարող կը թուի ըլլալ այս գլխացաւերուն պատշաճ եւ տրամաբանական լուծումներ գտնել:

Ինչո՞ւ: Հարցումը շատ տեղին կը գտնենք, քանի որ աշխարհի հզօրագոյն երկիրը հանդիսացող այս մեծ հանրապետութիւնը, ոչ միայն գինք շարժող հարցերուն լուծումներ չունի, թէ ներքին եւ թէ արտաքին մարզերու մէջ, այլ մանաւանդ նոր եւ յարաբերաբար աւելի կնճռոտ հարցեր կը ստեղծէ իրեն համար: Այս կացութեան հոգեբանական բացատրութիւն կարելի է տալ, առարկելով որ արդէն իսկ գոյութիւն ունեցող հարցերը «մոռցնել» տալու միջոց մըն է նոր հարց ստեղծելը: Միւս կողմէ, կրնայ նաեւ նշանակել «Չայլամեան» քաղաքականութիւն մը, այսինքն իրականութիւնը ժխտելու, չտեսնելու «գիտակից» փորձ մը, սպասելով այն երջանիկ օրուան, երբ հարցերու լուծման համար նպաստաւոր պայմաններ պիտի ստեղծուին: Այս մէկը ուղղակի հոմանիշ է երազատեսութեան, ստեղծուած կացութեան աւարկայական վերլուծումի բացակայութեան, եւ ինչ որ շատ աւելի ողբալի պիտի ըլլար, գոհացուցիչ լուծումներ գտնելու անկարողութեան:

Ժողովրդական ասած մը կ'ըսէ. «Զի հեծնելը մէկ ամօթ, ձիէն իջնելը երկու ամօթ»:

Ամերիկան այս օրերուն «ձի հեծած է», իրաքի, Աֆղանիստանի, քիչ մըն ալ Մերձավոր Արեւելքի մէջ: Թէ ինչո՞ւ «ձի հեծած» է, հարցումին առածին առաջին մասը գայն «ամօթ» մը կը նկատէ:

Մոռնանք նաեւ որ Ամերիկա նաեւ ձեռնարկած է ահաբեկչութեան դէմ համաշխարհային պատերազմի մը, գոնէ այս մէկը կարելի է նկատել պարտադրուած եւ մասամբ մըն ալ արդարանալի 2001 թուականի Նիւ Եորքի մէջ տեղի ունեցած երկնաքեր շէնքերու վրայ յարձակումէն ետք:

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՌՁԵՒ Առ այժմ յստակ չէ թէ պատմութիւնը ինչպէ՞ս պիտի դատէ այս օրերու Ամերիկայի հետեւած քաղաքականութիւնը, մանաւանդ միջազգային գետնի վրայ: Եթէ այս գործը նախատեսելը պատմութեան

ձգենք, այսօր, ներկայի տուեալներով, դժուար պիտի չըլլայ հաստատել որ, բացի ահաբեկչութեան դէմ համաշխարհային երկարատեւ պատերազմէն, ինչպէս ըսուեցաւ, պարտադրուած եւ հոգեբանօրէն արդարանալի, Ամերիկայի միւս արկածախնդրութիւնները, յատկապէս Աֆղանիստանեան եւ իրաքեան, եւ թերեւս ալ, մօտ կամ հեռու ապագային, իրանեան, սխալ հաշիւներով եւ թափանցիկ տրամադրութիւններով սկսուած արկածախնդրութիւններ էին եւ են, որոնց համար շատ սուղ գին կը վճարէ այս մեծ երկիրը:

Հետաքրքրական է որ այսօր, նախագահ Պուշ իր միակ գինակիցը՝ Անգլիոյ Թոնի Պլէրը, երկուքն ալ աշխարհի առջեւ կը խոստովանին որ Ամերիկեան «քառ-պոյական» հոգեբանութեամբ մօտեցած են քաղաքական բարդ հարցերու, եւ գօրամոր պետութիւն մը ըլլալու հանգամանքէն մեկնելով, գէթ Ամերիկեան, կը փորձէ աշխարհին պարտադրել կացութիւններ, որոնք ստեղծուեցան շինծու գաղտնի ոստիկանական տեղեկութեանց հիման վրայ, եւ կեղծ փաստաթուղթերով: Ի՞նչ կը վերաբերի իրաքին, ՄԱԿ-ի այդ օրերու պատասխանատուն, իրաքի մէջ մասսայական զէնքերու փնտրութեան կատարող, Պրն. Հանս Պլիքս, որ դարձեալ հրապարակի վրայ է այս օրերուն, կը պնդէ եւ կը հաստատէ որ իրաք գերծ էր մասսայական զէնքեր ունենալէ եւ արտադրելէ, եւ իրեն պէտք եղած ժամանակը չտրամադրուեցաւ, ամբողջովին հերքելու ամերիկեան գաղտնի ոստիկանական սպասարկութեանց տեղեկութիւնները: Աւելին կայ դեռ: Այսօր խոստովանութիւն կ'ըլլայ որ այդ տեղեկութիւնները «յարմարցողած» էին Ամերիկայի տրամադրութիւններուն, իրաքեան պատերազմը շղթայազերծելու համար: Եթէ շիտակ է այս վերջին վարկածը, ուղղակի ոճրային բնոյթ ունի, եւ ցոյց կու տայ մեծ տէրութեանց գործելակերպային մտայնութիւնը: Ամերիկա ինչո՞ւ այդքան կը պնդէր Սատտամ Հիւսէյնէն ձեռքազատուելու: Քանի որ բռնատէ՞ր մըն էր ան, իրաքեան շիիններու եւ քիւրտներու դահի՞ճն էր ան, թէ Ամերիկան կ'ուզէր անպայման ժողովրդավարութիւն-տեմքրասի հաստատել երկրէ մը ներս, ուր ցեղային եւ կրօնական տուեալները բոլորովին տարբեր բան կը թելադրէին:

Ամէն պարագայի, իրաքեան, ինչպէս նաեւ աֆղանիստանեան պատերազմները իսկական պատճառները տակաւին կը մնան ծածուկ, եւ

ոչ լման արդարանալի, որոնց համար ալ միջոցաւոր մարդիկ տակաւին երկար պիտի սպասեն խաղաղ կեանք մը ունենալու:

ԻՐԱՆԻ ՊԱՐԱԳԱՆ

Եթէ պէտք զգացինք քիչ մը երկար յամենալ, միջազգային ահաբեկչութիւն - Աֆղանիստան-իրաք հարցերու շուրջ, առանց մոռնալու Հիւսիսային Քորէան, պատճառը այն է որ տակաւին այդ հարցերուն նոյնիսկ լուծումներու շուրջ խօսակցութեան բացակայութեան, Ամերիկան իր գլխուն կ'ուզէ փաթթել մէկ ուրիշ թնճուկ մը, այս մէկը շատ աւելի ծանրակշիռ քան իրաքն ու Աֆղանիստանը, որ իրանի պարագան է:

Ինչո՞վ կ'ամբաստանուի իրանեան պետութիւնը: Որ ան, այսինքն իրան, կ'ուզէ շրջանային ոյժ դառնալ, եւ հիւլէական զէնքի պատրաստութեան դիմելով, սպառնալ Ամերիկայի դաշնակից Իսրայէլի գոյութեան, հովանաւորել «Հզպալա» ահաբեկչական կազմակերպութիւնը Լիբանանի մէջ, գործակցիլ Սուրիոյ հետ որ կը դասուի ահաբեկչական երկիրներու շարքին, եւ այլն: Այս բոլորէն անկախ, իրան նաեւ կ'ամբաստանուի Ուսամա Պըն Լատընի «Ալ-Քալիսա» հետ գործակցութեամբ, որ անշուշտ մեծ յանցանք կը նկատուի Ամերիկայի կողմէ: Տակաւին շատ յստակ չէ իրանի դերը իրաքեան պատերազմին մէջ, թէեւ իրաքեան շիինները մեծ մասամբ իրանեան արեւելում որդեգրած են, եւ կամ կրնան որդեգրել: Իրաքի նոր նշանակել վարչապետը յատկօրէն կը յայտնէր թէ իրաք չի կրնար իրանի վրայ յարձակման խարխիս դառնալ: Այս բոլորին դիմաց, Ամերիկա տակաւին չի կրնար յստակ դիրքորոշում ը որդեգրել: Երբեմն կը սպառնայ, ՄԱԿ շրջանակէն ներս,

տնտեսական պատժամիջոցներու դիմել, երբեմն պատերազմական գործողութիւններ ակնարկել, եւ վերջերս ալ, դիմում կատարել որ իրանի հետ խօսակցութեան սկսելու, Եւրոպական երեք երկիրներու հետ, Ֆրանսա, Գերմանիա, Անգլիա, ձեռով մը շրջանցելու համար իրանի հետ դէմ առ դէմ վէճը: Անդին, իրանի նոր նախագահը, ինչպէս նաեւ կրօնական թիւ մէկ դէմքը, ինքնավստահ եւ սպառնալիքներով լեցուն արտայայտութիւններ կ'ընեն, որոնց նպատակը շատ հաւանօրէն ներքին սպառնամ համար է, եւ միջազգային հանրային կարծիքին ուղղուած: Իրան նաեւ ունի երկու կարեւոր դաշնակիցներ, Ռուսաստանը եւ Չինաստանը, որոնք ամենեւին դէմ են իրանի նկատմամբ ՄԱԿ-էն ներս պատժամիջոցներու որդեգրման:

Առ այժմ այս է պղտոր կացութիւնը իրան-Ամերիկա փոխ-յարաբերութեան: Զինուորական միջամտութիւնը կը թուի ոչ-փափաքելի, չըսելու համար վստահաւոր: Կը մնայ դիւանագիտական խօսակցութիւնը առանձին կամ Եւրոպայի երկիրներով: Նոյնիսկ ՆԱԹՕ-ի միջամտութեան մասին կը խօսուի:

Հետաքրքրական եւ ծիծաղելի այս կացութեան մէջ, այն է, որ երբ Ամերիկան լուրջ շատ լուրջ հարցեր կը դիմագրաւէ - գաղթականական հարց, պէնզինի գինը խայտառակ յաւելում, իրաք, Աֆղանիստան, ահաբեկչական պատերազմ, ներքին հարցեր, Ամերիկայի նախագահ Պուշ կ'ուզէ երկրի սահմանադրութեան մէջ փոփոխութիւն մտցնել, ամուսնութեան նոր սահմանում մը տալու համար: Զինք մտահոգողը միասնականներու ամուսնութեան պարագան կը թուի ըլլալ, որուն անպայման կ'ուզէ արգելք հանդիսանալ...

ԿԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՁ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ) ԱՄԷՆ ՏԵՄԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ 1060 N. ALLEN AVE. PASADENA ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԸՇՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680 (626) 398-0506

ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ Featring PlanScape® Keeping Californians Covered... The Power of Blue Health coverage for every household member and every household budget. Affordable plans for the whole family.

ԱՆԲՐԱԺԵՇՏ Է 1975-2005 30th ANNIVERSARY BEDROS SIAMANTO MARONIAN AUTHORIZED INDEPENDENT AGENT CA Insurance Lic#0494056 818-500-9585 805 East. Broadway, Glendale, CA 91205 Blue Cross of California

ՏԵՍԱԿԷՏ

ՄԵԾ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆ

Ո՞վ է այն հայը, որ չի ցանկանում տեսնել ցամաքից-ցամաք ու հայրենիքում նոյն ուղղագրութեան կիրառումը:

ՄՏԵՓՍԱՆ ԱԼԱՋԱՋԵԱՆ

Մաշտոցեան միևնույն ալբու-բենով մենք ունենք այժմ երկու ուղղագրութիւն:

«Առաջատ» ամսագրում հինգ տարի շարունակ այդ երկու ուղղագրութիւնները երեւացին կողք-կողքի, և կը շարունակենք մինչև...»

Բայց մինչև ե՞րբ կարելի է շարունակել այդպէս:

Եթէ մէկ ազգ ենք, եթէ մէկ է մեր գրականութիւնը, ապա պէտք է ունենանք բոլորի ու բոլոր ժամանակների համար ընդունելի մէկ ուղղագրութիւն, որպէսզի մեր ողջ գրագրութիւնը — պաշտօնական և ոչ-պաշտօնական գործավարութիւնը, մեր բոլոր գրաւոր հարգողակցութիւնները՝ նամակներ, բացիկներ, գանգուածային լրատուական միջոցները, դասագրքերն ու բոլոր արձանագրութիւնները, օրացոյցներն ու թերթիկները ունենան նոյն ընթացիկութիւնը, նոյն գրաւոր հասանելիութիւնը, մանաւանդ համակարգչայինը...

Նպատակներն են հարցերը ծնունդ:

Հարցերը ծնունդ են յատկապէս այնտեղ, ուր պատճառներ կան, և երբ ժամանակն է պահանջում, և այդ անմահ ժամանակն էլ պահանջում է լուծումներ:

Ի սէր Աստուծոյ և ի սէր ազգութեան՝ պէտք է շփոթել երկու գրական ճիւղերը, արևելահայերէնն ու արևմտահայերէնը մեր երկու ուղղագրութիւնների հետ և պէտք է դարձնել նախասիրութիւնների ու վէճերի առարկայ: Երկու ճիւղերը աշխարհաբարի նոյն ուղղագրութիւնն ունենին նախասիրական շրջանում:

Լեզուն ուրիշ է, ուղղագրութիւնն՝ ուրիշ: Բոլոր ալբուբենների գրերը գանազան ձևի գծեր են: Չկայ մի լեզու, որ ուղղագրական անհարթութիւններ չունենայ: Դա լեզուի զարգացման, հնչիւնական փոփոխութիւնների հետեւանք է, բայց քաղաքակիրթ երկրներում ուղղագրութեան բարդ բարեփոխութիւններ չեն կատարում, համակարգը (ընդունուած կանոնները) չեն խախտում, այլ առանձին շտկումներ են կատարում:

Սակայն փոխում են ողջ ալբուբենը, մէկը միևնույն փոխարինում: Ռուսերէնից կամ արաբատառից անցնում լատինականին: Մեր լեզուն կենդանի լեզու է, մեր գոյատևման բաբախող սիրտն է, իսկ մեր ալբուբենը այդ սրտի զարկերակն է:

Եւ մեր այս լեզուն, հայերէնը, գրաբարով, միջին հայերէնով, աշխարհաբար երկու ճիւղերով (արևելահայերէն-արևմտահայերէն), իր բոլոր բարբառներով, պատկանում է լեզուների հնդեւրոպական ընտանիքին: Պատմահամեմատական լեզուաբանութիւնը վկայ, ընդհանուր լեզուաբանութիւնը վկայ:

Հնդեւրոպական լեզուաբանի մէջ իր ինքնուրույն տեղն է զբաղեցնում հայոց լեզուն իր ծագումնաբանական, հնչիւնական յատկանիշներով, արմատական բառերի ստուգաբանութեամբ, և դա հաստատել են եւրոպայի խոշորագոյն գիտնականներից, լեզուաբաններ՝ գերմա-

նացիներ Հայնրիխ Հիլքշմանը, Իոզեֆ Մարկվարդը, Ի. Վինկերը, ֆրանսիացիներ՝ Վիկտոր Լանկլուան, Օգիւստ Կարիերը, Անտուան Մեյլէն, Ֆրեդրիկ Մակլերը, Ժիւլ ժիլիերոն, աստրացի՝ Ֆրեդրիկ Միլլերը, շուեցարիացի Ռոբեր Գոդելը, անգլիացիներ՝ Ֆրեդրիկ Ֆոնդբերը, Ջորջ Վիստոնը, դանիացի Պետերսոնը և դեռ՝ Բրիւսսէն, Ֆրանց Բոպպը, Շրոմպֆը, Լաուերը, Պետերմանը և դեռ՝ Մահեն և՛, և՛, և՛...»

Հիլքշմանը յայտնաբերել է 438 արմատ իրենց ստուգաբանութեամբ, իսկ հայ խոշորագոյն լեզուաբաններից Հրաչեայ Աճառեանը նշել է 11,000 արմատ, որից 8,000-ը ստուգաբանուած:

Մեր արմատները...

Մառը արմատից չեն կտրում: Մեր լեզուի հնդեւրոպական ընտանիքին մաս կազմելը սկսում է գրաբարից: Մեր բառապաշարի արմատը գրաբարն է: Դա համայն ազգին թողնուած ժառանգութիւն է, մեծ հարստութիւն է, իսկ արևելահայերէնին, յատկապէս թողնուած է հնդեւրոպականի հնչեղ բաղաձայնները, և այդ ժառանգութիւնը պատկանում է ամէն մի հայի:

Մեզ ժառանգութիւն է մնացել Մեսրոպեան ալբուբենը, բայց ոչ գրաբարեան ուղղագրութիւնը, որը բաղկացած է 36 տառերից, որովհետև միջնադարում այդ ալբուբենի վրայ աւելացան և, օ, ֆ տառերը, ինչպէս լատիներէնում Ս տառը, որը համապատասխանում է «իւ» երկբարբառին (ֆրանսերէն սու, fortune) և ոչ թէյ you-յու հնչիւնին: Գրաբարեան աւ դարձաւ օ, բայց ոչ ձայնաւորների միջին ու բառավերջում:

Գրաբարով և գրաբարեան ուղղագրութեամբ մեսրոպեան հազարաւոր ձեռագրեր են մեզ հասել — Մատենադարանը վկայ՝ մագաղաթներ ու հին մատենաներ, պահպանակներ ու պատառիկներ, վարքագրութիւններ և վիմագրութիւններ: Հայագէտները, անտարակոյս, պիտի սովորեն գրաբարը և նրա մեսրոպեան ուղղագրութիւնը: Հայագիտութիւնը այդտեղ է սկսում: Արդէն մեր բոլոր հայագէտ-լեզուաբանները սովորել և քրքրել են գրաբարը, մանաւանդ հայ հին միջնադարեան գրականութիւնն ու սովորական սիրողներն ու դասաւանդողները: Դրան վերադառնալ չենք կարող, բայց սովորողներ պէտք են:

Միջնադարում և միջնադարից յետոյ մեր ալբուբենի 39 տառերը պահպանելով լեզուական մեր երկու ճիւղերն ու իրենց բարբառները, ընթացան լեզուի զարգացման տարբեր ուղիներով, տարբեր լեզուներից ազդեցութիւններ կրելով, բայց բնաւ անջրպետ չստեղծուեց նրանց միջև, այլ մնացին կամրջուած և՛ բառարմատներով, և՛ հնչիւնագրերի երկբարբառներով: Ի՞նչ է երկբարբառը կամ եռաբարբառը: (A combination of two vowels pronounced as a single sound). Երկու կամ երեք ձայնաւորների միացութիւնն է որպէս ձայնաւորի մի նոր երանգ, որով վանկ է կազմուած: Դա մեզ թողնուած այն հարստութիւնն է, որով մեր լեզուն դարձել է սիրելի և երաժշտական:

Անգլիացի մեծ բանաստեղ Լորդ Բայրոնը գրում է.

— «Հայերէնը հարուստ լեզու է, լիովին պարունակում է մարդկային ձայների բոլոր հնչիւնները»:

Այդ բոլոր հնչիւնների մէջ են մտնում երկբարբառները, երկու ձայնաւորներից կազմուած հնչիւնները — երկբարբառը կամ եռաբարբառը կամ եւրոպական ընտանիքի դիֆթոնգները (diphthong):

Ահա թէ ինչպէս են գնահատում երկբարբառները մեր պատմիչները: Ղազար Փարպեցի (V դար).

— «Երբ բաւական չէին հայերէն բոլոր վանկերը հնչիւնական ամբողջ ճշգրտութեամբ արտայայտելու համար, (այսինքն ձայնաւորներով կազմուած վանկերը լրիւ ու ճշգրտութեամբ չէին արտայայտում հնչիւնները), եւ անդ վաղվաղակի նշանակեալ, անուանեալ և կարգեալ, յօրինել սիղոբայիւք (կապօք)»: Այսինքն՝ բառ կապողներ:

Երեք կամ երկու ձայնաւորների կամ մի ձայնաւորի կամ ձայնորդի (այս դէպքում և և յ), որոնք անուանում են նաև կիսաձայն ու համր, միացութեամբ ստեղծուեցին վանկարար հնչիւններ ուա, եա, ուե, էօ, իւ, ուի, ոյ...»

Մեսրոպ Մաշտոցը յօրինել էր դրանք, այդ երկբարբառները:

— Յօրինէր սիղոբայիւք — ձայնաւորներ ու վանկ կապողներ...

Երկձայնաւոր վանկերի մասին է խօսքը, երկբարբառների ու եռաբարբառների մասին, որոնք այնքան բարձրացրին լեզուների եւրոպական ընտանիքում մեր լեզուի ինքնուրույնութեան արժանիքը:

— ... Ձայնավորները նմանվում են երաժշտական ձայներին... այդ յատկութեամբ էլ պայմանավորված է ձայնաւորի լեզվաբանական դերը՝ վանկարար յատկութիւնը: Ձայնաւորների թուին են պատկանում նաև երկբարբառ-

ներն ու եռաբարբառները (տես՝ Հայկական Սովետական Հանրագիտարան — հատոր 6, էջ 692, սիւնակ 1. Ա. Խաչատրեան):

Մենք աշխարհաբարում եօթը ձայնաւոր ենք ընդունում՝ ա, ե, է, ը, ի, ո, օ և երկու ձայնաւորային ձայնորդ կամ կիսաձայն ւ, յ, բայց մի տասնեակ երկբարբառներ ու եռաբարբառներ, որոնք պատկանում են ձայնաւորների վանկարար կամ վանկակազմիչների կազմին. օրինակ իւ (աղբիւր, ձիւն), ուա (առուակ, նուազ), ուէ (նուէր, պատուէր) ուե (պատուել, հանուել), ուի (պատուիրակ, նուիրակ), եա (մատեան, պատեան), ոյ ու ոյ (գոյնգոյն, երեկոյթ-երեկոյթ): Սրանք ձայնաւորների երանգներ են, կամ տարբերակներ (էօ, ուի, աու) մէկ շնչով արտասանուող (մէկ հազագ) և վանկի մէջ էլ մէկ հազագով են հնչում:

Բայց անհնչյն «Հայաստանի Սովետական Հանրագիտարանում» — հատոր 3, 301 էջ, սիւնակ 1,

երկբարբառների ակադեմիական սահմանումը տալուց յետոյ, գրուած է. — «Երկբարբառ... կայ անգլերէնում, ֆրանսերէնում, եղել է հնդեւրոպական նախալեզվում՝ սանսկրիտում, գրաբարում և այլն: Ժամանակակից արևելահայ գրական լեզուն երկբարբառներ չունի»:

Հեղինակն է Հրանտ Զինալորի Պետրոսեանը, բանասիրական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր:

Մենք միասին ենք սովորել համալսարանում, նոյն ֆակուլտետի նոյն կուրսում և միասին էլ ունկնդրել ենք հայոց խոշորագոյն լեզուաբաններ Հր. Աճառեանին, Գր. Ղափանցեանին, Էդ. Աղայեանին, Գուրգէն Աւակին, Սերոբ Ղազարեանին, Ահարոն Գրիգորեանին: Ծանօթ ենք եղել Արարատ Ղարիբեանին, Գէորգ Չահուկեանին:

Շար.ը էջ 18

ԿԶԳՎՅԻՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՐԵԿՈՅ
R.U.U. HOMENMEN 1921
Նուիրում՝ 20 ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՆ
Կազմակերպութեամբ՝ Հ.Մ.Մ.-ի Խճամակալ Մարմնի
Կատարողութեամբ՝ Սիրում Երգիշ՝ Հրաչ Պողարեանի
8 Յուլիս 2006
Երեկոյեան ժամը 8:30-ին
Հ.Մ.Մ.-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ
1060 N. Allen Ave., Pasadena
Մուտքի Գուր՝ \$50.00
Նեղարեալ Մաշ

ԱԶԳԱՅԻՆ

«ԱԶԳԱՊԱՏՈՒՄ»Ի ԶԱՐՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

ԴՈԿՏ. Տ. ԶԱԽԷՆ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Տասնամեակ մը առաջ լոյս տեսաւ «Ազգապատում» հատորներու շարքին չորրորդ հատորին առաջին գիրքը, որուն յաջորդեցին մնացեալ երկու գիրքերը, միասնաբար բովանդակելով 20-րդ դարու հայ եկեղեցական եւ ազգային իրադարձութիւնները: Անոնք եղան ուղղակի շարունակութիւնը մեծանուն Մաղաքիա Պատրիարք Օրմանեանի անսխալ թղթագրութեան հակա հատորներուն: Ընթերցողներ յաճախ կը հարցնէին թէ ինչ պայմաններու տակ գրուեցան երեք նոր հատորները եւ թէ որքան ժամանակ տրամադրեցի զանոնք ամբողջացնելու համար: Առիթը այս նկատելով կը գրեմ հետեւեալ տողերը անոնց հետաքրքրութեան մասամբ նահանջում տալու համար, ինչպէս գտեալ պատմութեան յանձնելու կարեւոր աշխատանքներէն մը նախագիծը:

Հայնաճառաւ եւ սակայն կեդրոնացեալ ծրագրի հիման վրայ կատարուելիք աշխատանք մը կը պահանջէր այս գործը անտարակոյս: Կենսական էր 20-րդ դարու Հայաստանեայց եկեղեցւոյ առնչակից եւ լծակից բոլոր կարեւոր դէպքերն ու դէպքերը համախմբել եւ դասաւորել, ապահովել կարենալու համար «Ազգապատում»ի համապարփակ բովանդակութիւնը, այնպէս ինչպէս մեզի յանձնած է Օրմանեան, առանց սակայն սահմաններէն դուրս ելլելու եւ գործին կեդրոնական հետաքրքրութիւնը իր նպատակէն հեռացնելու:

Դժուարութիւններ եւ օրհնութիւններ միանգամ երեւան ելան շատ բնական կերպով: Հոգեւորականներէ եկած կամ չեկած օրհնութիւններու մասին չէ խօսքը, այլ ինքնեկ յայտնուած իսկական օրհնութիւններ էին անոնք, ճակտի քրտինքով շահուած, որոնք աշխատանքի լման ընթացքին քայլ առ քայլ հարթեցին դժուարութիւնները:

Խօսելով դժուարութեանց մասին նախ, հարկ է նշել ընդհանուր ծրագրի մը կազմութիւնը, որ բնաւ երեք իր սկզբնական սահմաններուն մէջ էր կրնար մնալ: Ճարտարապետական յատկագրի ձեւով սկսայ, եւ սակայն շուտով այնքան ուռճացաւ նիւթն ու բովանդակութիւնը, որ մինչեւ վերջին յօդուածի պատրաստութիւնը նոյնիսկ, այդ ծրագիրը անհաշուելի յաւելումներու եւ յապաւումներու ենթարկուեցաւ: Պարզ խօսքով, որքան յոռաշացաւ նիւթերու շարադրութիւնը, այնքան զարգացաւ եւ բերեցողացաւ գիրքին կառուցը:

Դժուարութեանց շարքին, անշուշտ մտահոգիչ տեղ կը գրաւէր աղբիւրներու առկայութիւնն ու օգտագործումը: Բարեբախտաբար հարուստ գրադարանս օգնութեան հասաւ: Եւ սակայն ահա հոս կը կայանար վերեւ յիշուած օրհնութիւններուն նպաստը որոնք յայտնուեցան եւ որպէս անձրեւ տեղացին ու բերրի դարձուցին «Ազգապատում»ի դաշտը: Գիրքերու ներկայութիւնը մէկ բան, եւ սակայն անոնց յայտնուելը ուրիշ բան, եւ գիտէք որ երկրորդը աւելի դժուար է ձեռք ձգել, այսինքն գրադարաններու մէջ շարուած գիրքերն ու պարբերականները լեզու պէտք է լլլէին ու ելան, ձայն պէտք է տային ու տուին, թէ «ես հոս եմ, ես հոն եմ, կամ վարի աննտեսանելի պա-

հարանին մէջն եմ, եւ կամ պահուած գիրքերու արանքը»:

Իսկական օրհնութիւնը այս տեսակն էր: Որքան կը զարգացնէին ընթերցումս, այնքան նիւթեր կը կուտակուէին սկզբնական ծրագրին վրայ, ետեւառաջութիւն յառաջացնելով, եւ որ ամենէն կարեւորն էր, ամէն նոր նիւթ իրեն յատուկ աղբիւր մը կամ աղբիւրներ կը պարտադրէր, այնպէս որ ծրագրին մէջ չմտած շարք մը գիրքեր եւ պարբերականներ ինքնաբերաբար յայտնուեցան եւ լիովին օգտագործուեցան:

Առաջին հատորի պարագային, 20-րդ դարու առաջին 30 տարիներու քաղաքական դժիւր պարագաները առիթ տուած էին տխուր, խառնակ, անյարիր եւ անկրօն վիճակներու թրջահայաստանէն ներս, որոնք կը նիւթուէին Կ. Պոլսոյ պատրիարքութեան շուրջ, եւ անկէ՝ Սիսի կաթողիկոսութեան եւ գաւառի հայութեան վրայ: Թուրքիոյ հայկական գաւառներու բարեկարգումներու հարցը, գաւառներու մէջ պատահած խժոժութիւնները, երիտասարդ թուրքերու խլրտումները, Սուլթանին անկումը, եւ վերջապէս հայկական մեծ եղեռնը, դժբախտ բաժինը պիտի հանդիսանային առաջին հատորին, վերտառութեանը ներքեւ Տ.Տ. Մատթէոս Բ. եւ Տ.Տ. Գէորգ Ե. ամենայն հայոց կաթողիկոսներու, եւ անոնց յաջորդող Սարգարապատն ու 1918-ի կարճատեւ Հայաստանի Հանրապետութիւնը հայուն ապրելու վճռակամութիւնը պիտի փաստէին: Սովետական կարգերու հաստատումով Հայաստան մաս պիտի կազմէր բոլորովին խորթ դրութեան մը այնքան արագ եւ նոյնքան աննախատեսելի եւ անխուսափելի պարագաներու տակ:

Հայ եկեղեցին պահ մը կը մերկանար իր փառքէն եւ պատիւէն, Կ. Պոլիս կը չքանար, Սիս աւերակի կը վերածուէր, Երուսաղէմ ամուլ կը դառնար, եւ Մայր Աթոռ իսկոյն գերի կը դառնար անաստուած եւ անկրօն քաղաքականութեան: «Ազգապատում» ջանացած է համադրել այս բոլորը, հայրենիքն ու արտասահմանը հաւասարապէս, առանց ձեռքի տակ ունենալու ժամանակակից աղբիւրներ, տուեալ անկարելի պայմաններու բերումով: Բարեբախտաբար յետագային, վերապրող ափ մը հոգեւորականներ եւ մտաւորականներ, Ջաւէն պատրիարք, Բաբգէն կաթողիկոս, Թորգոմ պատրիարք, Գրիգորիս եպս. Պալաքեան, Ղեւոնդ եպս. Դուրեան, Արշակ Ալպոյաճեան, Վահան Թէքէեան, մենագրութիւններով յետագարձ վկայութիւններ եւ վաւերագիրներ յանձնեցին մեզի աղիտալի դէպքերուն մէջ հիւժուած Հայ եկեղեցւոյ մասին:

Երուսաղէմ գտաւ ինքզինք՝ շնորհիւ Դուրեան եղիշէ պատրիարքին, որ իր կարգին լսեց եղբայրական խնդրանքը Կիլիկիոյ ծերունի Սահակ Խապայեան կաթողիկոսին, որ ոչ Աթոռ ունէր եւ ոչ Խորան, փոխանցեց անոր թեմեր, որոնց շնորհիւ կեանքի կոչուեցաւ Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը 1930 թուականին Անթիլիասի մէջ: «Սիոն» եղաւ լրատու փարոսը Հայ եկեղեցւոյ, ուր արձագանգ գտան Մայր Աթոռի եւ վտարանդի Հայ եկեղեցւոյ մնացորդացին վերջապետումն ու վերընձիւղումը:

Երկրորդ հատորի պատրաս-

տութիւնը բաղադրաբար աւելի կոկիկ, ամփոփ եւ դասաւորեալ եղաւ եւ նոյն ատեն սրտածմլիկ, երկու գլխաւոր պատճառներով: Նախ, Խորհրդային կարգերը լուծուեցին Հայ եկեղեցւոյ խիղճն ու ձայնը, մանաւանդ Ստալինի տարիներուն եւ տիրապետեցին անոր կառուցին ու խեղդելու աստիճան ճնշեցին հայ հոգեւորականութեան եւ եկեղեցւոյ ներքին վարչական գործերուն վրայ: Բացասական եւ դատապարտելի այդ վերաբերմունքը տեւեց շատ երկար, ու Մայր Աթոռ եւ ներքին թեմեր ջլատուեցան ու անարգուեցան, որուն դիմաց ծառայեց հոյ՛ մը հոգեւորականներ՝ Գէորգ Ե Սուրբնեան, Խորէն Ա Սուրբաբեգեան եւ Գէորգ Զ Չօրէքեան կաթողիկոսներ, ինչպէս նաեւ Գարեգին Յովսէփեան, Վրթանէս Յակոբեան, Արտակ Սմբատեան, Գիւտ Տէր Ղազարեան, Իսահակ Տէր Միքայէլեան, Բագրատ Վարդապարեան, Մեսրոպ Տէր Մովսէսեան եպիսկոպոսներ, հոգեկան բարձր արիւնթեամբ, դառնալով մեր օրերու սուրբերը, առանց որոնց Մայր Աթոռը կը դադրէր իր գոյութենէն: Այս բոլորի կողքին սակայն Խորհրդային Հայաստան շինարարութեամբ, գիտական աշխատանքով, բանասիրական եւ մշակութային վաստակով հսկայ վերելք մը արձանագրեց:

Երկրորդ պատճառն էր անտարակոյս արտասահմանի Հայ եկեղեցւոյ դիրքն ու վարկը ու անոր Մայր Աթոռի ընձեռած անվերապահ հեղինակութիւնն ու զօրակցութիւնը, հակառակ Ս. Էջմիածնի շատ նկուռ վիճակին: Երուսաղէմ իսկոյն գորացաւ Դուրեան եւ Գուշակեան պատրիարքներու օրով, որոնք հայ հոգեւորականութեան արժէքաւոր սերունդներ հասցուցին: Անթիլիաս կեանքի կոչուեցաւ Բաբգէն Կիլիկեան Աթոռակից

կաթողիկոսի վարչութեան ներքեւ, ու նորակառուց մայր տաճարի, վեհարանի, դպրեմանքի եւ նահատակաց յուշարձանի հոյակապ շէնքերով, շնորհիւ եւ ձեռամբ Պետրոս Սարաճեան կաթողիկոսի, եղաւ պատկառելի կեդրոնը Կիլիկիոյ կաթողիկոսութեան:

Արտասահման հաստատ եւ սակայն Մայր Աթոռ մահամերձ էր, եւ գրել Խորհրդային Հայաստանի եւ Մայր Աթոռի յարաբերութեանց մասին պիտի նշանակէր նաեւ չգրել, եթէ նորայայտ մի քանի, քիչ եւ սակայն խիստ կենսական, վաւերագրային հատորներ լոյս չտեսնէին Խորհրդային կարգերու փլուզումէն անմիջապէս ետք: Ձեռքիս տակ ունէի լրիւ շարքը «Սիոն» եւ «Էջմիածին» ամսագիրներու, եւ հայոց պատմութեան վերաբերեալ շարք մը արժէքաւոր եւ երբեմն անարժէք հայաստանեան հրատարակութիւններու, վերջիններս սակայն դեղագիրներու ոճով գրուած, դեղահատներ կը մատուցանէին պատրաստ կուլ տրուելու:

Չկար ուրեմն իրական աղբիւր մը իրական դէպքերուն վերաբերեալ: Նորանկախ Հայաստանի Հանրապետութեան նախաձեռնութեամբ հանգուցեալ Սանգրո Բեհբուղեան նախ գոյգ մը վեւերագրային եւ ծաւալուն հատորներ խմբագրեց, մին Գէորգ Ե.ի օրով Հայ եկեղեցւոյ կրած անտանելի հալածանքներուն վերաբերեալ, եւ միւսը նահատակ Խորէն Սուրբաբեգեան կաթողիկոսի կեանքն ու գործունէութիւնը բովանդակող, լրիւ վաւերագրային, նամակներով, հաղորդագրութիւններով, կոնդակներով եւ ինդրագիրներով: Բեհբուղեան իր շնորհակալ գործը շարունակեց չորս այլ հատորներու հրատարակութեամբ, մինչեւ Գէորգ Զ կաթողիկոսի շրջանը: Ուրիշ

Շաք-ը էջ 18

Թեքեան Մշակութային Միութիւն (Լոս Անճելըսի Մասնաճիւղ) Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն (Մշակութային Յանձնախումբ) Նոր Սերունդ Մշակութային Միութիւն Միտով կը հրատարակուի ձեռագիր գրքերով 2006 ԱՊՐԻԼԻՆ ԱՆԹԻԼԻԱՍ ԿԱՅԱՅԱԾ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ Գ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄ - ԶՐՈՅՅԻ Կը մասնակցին ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ ԼԻՍԻ ՍԻԻԼԱՀԵԱՆ ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ ԹԵՐԵՁ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ ԽՈՐԷՆ ԱՐԱՄՈՒՆԻ Համադրող ԼԵԼԻԹ ԲԵՀԷԵԱՆ Կիրակի, Յունիս 18, 2006. Երեկոյեան ժամը 7:00-ին Կլեմոնտին Կեդրոնական Գրադարան 222 E. Harvard Street, Glendale Հիւրասիրութիւն Մտաքը Ազատ

ՓԱՂՈՒԹԱՅԻՆ

ԼԱՐՔ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ «ԴԻԼԻՋԱՆ» ՀԱՄԵՐԳԱՇԱՐ Ի ՍԿԶԲԱՆԷ ՕՐՀՆՈՒԱԾ Է ԲԱՐԻՆ

Ձեռնում առիճն հողերում տակ պայթեցուց սերմերն.
Արտերս այս գիշեր կանաչներ են լուսնկային տակ գարնան...
Մայրիկ, ինձի ծիլ մը բեր, քրտինքիս ցողը վրան:

Դանիել Վարուժանի

ԱՆԳԻՆԷ ՄՈՒՐԱՏԵԱՆ

Դանիել Վարուժանի բանաստեղծության լույսն ու խորհուրդը իրենց հոգիներուն մէջ՝ Լարք Երաժշտական Ընկերակցութեան կուչական բարեկամները, Կիրակի, Մայիս 21-ին, ընդառաջելով նախագահ՝ Տօքթ. Նազարէթ Տարազեանի հրահանգին, ներկայ եղան «Դիլիճան» Համերգաշարի երկրորդ շրջանի բացման ընդունելութեան, Տարազեաններու գեղատեսիլ ապարանքին մէջ (LaCanada-Flintridge):

2005 Սեպտեմբերի վերամուտին, Լարք Երաժշտական Ընկերակցութեան նախկին տանտէրերը իրենց տասը տարուան պատուաբեր վարձակալ Լարք Հիմնարկին հրահանգեցին որ պարպեն իրենց կեդրոնը: Լարքի ընտանիքը յանկարծակիի եկաւ, Լարքայիններ բաւական լուրջ տագնապներէ անցան, ծրագիրներ դադրեցան, ապագայ հեռանկարներ ցնդեցան, ամիսներով անորոշութիւնը գրաւեց հոգիները:

Բայց Աստուած օգնեց այս բարի եւ բազմաբեղուն կազմակերպութեան: Ինչպէս առածը կ'ըսէ «Ամէն չարիքէ բարիք մը կը ծնի»:



Դիլիճանի գեղարուեստական դեկավար՝ ջութակահար Մովսէս Պօղոսեան

Կրիկիտոյ Կաթողիկոս Տ.Տ. Արամ Ա-ի ներկայութեամբ, անթերի ու անարգել կայացան «Դիլիճան» համերգաշարի 6 համերգները. ինչ ըսել Մարտ 15-ի Մէրգէյ եւ Լուսինէ Խաչատրեաններու գերագանց վալսէթ պարգեւող յաջող կերպով կազմակերպուած համերգի մասին, կամ Սան Ֆրանսիսքոյի համերգին մասին, կամ Փոխ Տնօրէնուհի Թա-



Ջութակահար Մովսէս Պօղոսեան, ջութակահարուհի Անի Գավաֆեան եւ այլքահար Գիւլֆաշաշեանի

Լարքի դեկավար Վաչէ Պարսումեանն ալ, որ վհատիլ չի գիտեր, ինքնավստահ է, քաջաբար դիմագրաւեց բոլոր խոչընդոտները, եւ Աստուծոյ օրհնութեամբ, իր ետին կանգնող բազմաթիւ հրեշտակներու եւ սիրողներու օժանդակութեամբ, տքնաջան աշխատանքով, տակաւ առ տակաւ Լարքի յուսակտուր հոգեվիճակը վերականգնեց: Իր առաջնորդութեամբ, Լարքի մտերիմները ծրագիր մը կազմեցին շուտով, լարուած որոնումներով նոր կեդրոն մը գտան, ու մեծ պարտաւորութիւններու տակ անցնելով երկու ամսուան ընթացքին հին կեդրոնէն փոխադրուեցան 543 Arden Avenue, Glendale, ընդարձակ եւ յարմարաւէտ կեդրոն մը՝ որ չորս անգամ աւելի մեծ է նախկին վայրէն: Ամէն երաշխիքները կան որ Լարքի այս նոր կեդրոնը համայնքի արուեստի ամենապատուաբեր կեդրոնը ըլլայ:

Ու հակառակ տագնապներուն եւ անորոշութիւններուն, Լարքը անցեալ տարուան համաձայնած պարտաւորութիւնները կատարեց անթերիաբար: Որքան յիշատակելի երեկոյ էր Անթիլիասի Դպրեվանքի 75-ամեայ յոբելեանին նուիրուած համերգը Հոկտեմբեր 14-ին,

գուհի Արգունեանի եւ Լարք Երաժշտանոցի ծնողներու նախաձեռնած «Մայրերու Օր»-ուան երեկոյի մասին, ուր Լարքի միաւորները՝ Տաւիղը, Ծիածանը, Գուսանականը, որոնք իրենց աշխատանքը շարունակած էին տարուան ընթացքին, ներկայացան գեղեցիկ ելոյթներով: Եւ ինչ ըսել մանաւանդ այդ օրուան գեղեցկագոյն նուէրին՝ Լարքի սաներու հայերէն ասմունքին մասին, որ գերագոյն բաւարարութիւն պարգեւեց ներկաներուն:


Ահա փաստեր որ Վաչէն չի վախնար անորոշութենէն, ցուրտէն, մութէն, փոշիէն, մրրիկներէն կամ փոթորիկէն, եւ ան արժանի է մեր բոլորի գուրգուրանքին:

Այս երկար նախաբանը գրելով կ'ուզէի մէկ անգամէն գտնել ոչ միայն բուն նիւթին անցնելու բանալին, այլեւ այն բանալին, որով կը բացուի երկար սպասումէ վերջ յաջող, մեծ, հաւաքական արուեստ ստեղծելու գաղտնիքը:

Ըսուած է թէ «կեանքի ամենամեծ հաճոյքը, բարձրագոյն ուրախութիւնը՝ մարդոց օգտակար ըլլալն ու մտերիմ զգալն է»: Այս ճարը. էջ 19

ՓԱՍՏԻՆԱ

Ա. ԵՒ Մ. ՅՈՎԱՏԷՓԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ



Ա. եւ Մ. Յովսէփեան վարժարանը 7րդ կարգի աշակերտ՝ Դաւիթ Մարկոսեան

Լոս Անճելոս Գաւառի Գիտական Փառատուն-Մրցոյթի ընթացքին քիմիագիտութեան կրտսերներու բաժանմունքին առաջին դիրքը գրաւելէ ետք, Փաստինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Ա. եւ Մ. Յովսէփեան վարժարանը 7րդ կարգի աշակերտ՝ Դաւիթ Մարկոսեան վերջերս երկրորդ հանդիսացաւ Քալիֆորնիոյ Նահանգային Գիտական Փառատուն-Մրցոյթին:

մէջ անցեալը վերականգնող իր ցուցադրած ցնցիչ նկարներով, այլ նաեւ նկարներուն վրայ եղած յարձակումով: Կարգ մը շրջանականեր՝ աջակողմեան ազգայնամոլներ, որոնք հանդուրժողականութիւն չունին եւ ժողովրդավարութեան նդէմ են, «Կամ սիրէ այս երկիրը, կամ հեռացիր», «Թուրքիա թուրք է եւ թուրք պիտի մնայ», «Երբ մենք մանուկ էինք, Աթաթիւրքին տունը ումբահարուեցաւ, մենք ապրեցանք այս բոլորը» կարգախօսներով ցուցաբերած խուժեցին, կարգ մը նկարներ պատուեցին, անոնց վրայ հաւկիթ նետեցին: Կ'երեւի իրենց, կամ իրենց դաս տուողներուն յիշողութիւնը շատ տկար էր, որով մոռցած էին, թէ ուսմբը, թրքական կառավարութեան հրահանգով, թուրք մը պայթեցուած էր: Այդ ցուցահանդէսը թուրքեր կազմակերպած էին եւ նման իրենց, այդ թուրքերն ալ Թուրքիոյ մէջ ապրելու իրաւունքը ունէին:

Յայտնի է, թէ 50 տարուայ մէջ որոշ շրջանակներու գլուխները ոչ միայն չէին փոխուած, այլ իրենց նման համախոհներ ալ հասցուցած էին: Յաւալին այն է, որ այդ յետադիմական փոքրամասնութիւնը

Շարք էջ 17

ԼՈՅՍ ՏԵՍԱԿ

ԴՈԿՏ. ԱԼՖՐԷԴ ԴԱՆԻԷԼԵԱՆԻ

ԱՆՂԵՐԵՆ-ԲԱՅԵՐԵՆ	ENGLISH-ARMENIAN
ԲԺՇԿԱԿԱՆ	COMPREHENSIVE
ԲԱՑԱՏՐԱԿԱՆ	MEDICAL
ԱՈՋԵՈՆ ԲԱՌԱՐԱՆԸ	DICTIONARY

Շուրջ 500 էջեր եւ 8,500 բժշկական, գիտական, առողջադատական բառեր եւ բացատրութիւններ դարունակող այս գործածական եւ խիստ օգտակար բառարանը, ամէն հայ ընթանի՞ր դարձի ունենալ:


Գին՝ \$20.00

Կը վաճառուի գրասունցներ Պերճ (818) 244-3830, Ադրիլ (818) 243-4112, Սարդարադաս (818) 500-0790 եւ «ԵՐԵՎԱՆ» տպարան (818) 246-2070

Կարելի է դիմել նաեւ հեղինակին, հեռախօսելով (818) 543-7584

ԱՍՏՈՒԾՈՅ ՄԱՐԴԸ ԲԱՆԱՍՏԵՂԾ՝ ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

ՎԱՐԴԱՆ Ա.Ի. ՔԶՆՅ. ՏԻԻԼ ԿԷՐԵԱՆ



Երեւելի տաղանդներ կան՝ համեստութեան եւ աշխատասերութեան ստուերներուն մէջ պլպլացող, իմացական անսողուն ձիրքերով եւ հոգեւոր արժանիքներով հարուստ, որոնք գրականութեան մէջ համբաւի հասած հեղինակութիւններ են՝ իրենց յուսով վաստակով եւ դեռ գարունամեայ եռանդով կը շարունակեն արձակ եւ քերթողական հրատարակութիւններով հարստացնել գրական աշխարհը: Հագուստազուտ երեւոյթներ են՝ ներկայ նիւթապաշտ ժամանակներուն՝ անոնց աշխատանքը գործունէութիւնը, որ կը վրիպի հասարակութեան ուշադրութենէն:

Անոնք դարամերձ տարիքի հասունութեան մէջ կողմացած կ'ապրին եւ չեն ակնկալեր որ հասարակաց զգացումէն շնորհանդէսներով մեծարուին իրենց մտային գովելի ստեղծագործութիւնները, որոնք յաճախ ապապրուած ու յանձնարարուած ձեռնարկներ են, կիսագրագէտներու եւ սոփեասներու գովեստի քաղցր գոհացնելու:

Այդ հանրաճանաչ բեղուն միտքերէն մէկն է եւ իմ գնահատումով միակը, որուն երկնային ներշնչումով յղացուած քերթողական հատորները ճառագայթում կու տան իր մեծ վաստակին:

Ժագ Ս. Յակոբեան, այս է անունը ՀՈԳԵՒՈՐ ՔԵՐԹՈՂԻՆ, որ եկեղեցական մը չէ, բայց հոգեշունչ քերթուածներով հոգիները կը հարստացնէ Աստուծոյ ոսկեբերան խօսքերով եւ Քրիստոսի շողարձակ շնորհներով:

Այդ յօդուածը ստորագրող քահանայն է բանաստեղծը՝ համանուն ռուսաց գրական վկայուած շրջանաւարտներ են, աւելի քան վաթսուն տարի առաջ:

ՀՐԱՇԱԿՈՐԾ ՏԱՃԱՐ կոչած է բազմաձևուտ եւ իմաստուն հիմնադիրը՝ իր անունով մկրտած հայկական գոլէճը՝ Ռեթէոս Պէրպէրեան եւ որուն երկու գրականագէտ գաւակները՝ եղած են գրագիտութեան եւ փիլիսոփայութեան մեր ուսուցիչները, Օննիկ եւ Շահան Պէրպէրեաններ:

Մեր նահատակ գրագէտներէն ու բանաստեղծներէն շատերը, Սիւսանթոս եւ բազմաթիւ ուրիշ մեծանուն գրողներ, այդ Լուսոյ Տաճարէն շրջանաւարտ եղած են:

Բանաստեղծ ժագ եւ ես, վեց տարիներու անջրպետով, ծերունագրող երիտասարդներ ենք, ան կը վազէ ետեւէս առոյգ քայլերով, իր հարիւրամեակը նուաճելու, համաձայն մեր պարզեւատու Տիրոջ հաճութեան:

Երկուքս ալ մեր խորագրած հաւատքով, Աստուծոյ անբեկանելի գորութեան յենած, կը վաչելենք մեր երջանիկ Այսօրը, առանց վաղուան ու մահուան վրայ մտածելու:

Աստուած հեռու կը պահէ մեր կեանքէն մահուան ստուերը եւ կու տայ մեզի այն կենսաւարտ զգացումը, թէ մեր վախճանը պիտի տնօրինէ ինքը եւ ոչ թէ մահուան ուրուականը:

Երկուքս ալ՝ մեր երիտասարդութեան առոյգ տարիները Աստուծոյ սիրոյ օրէնքին ու կամքին համաձայն ապրած ըլլալով, Տիեզերակալը շնորհեց մեզի ծերութեան շողերուն մէջ, մահուան ազդարարութիւններէն ազատ, խաղաղ ու հանգստաւէտ շրջան մը,

որուն համար մեր երախտագիտութիւնը անսահման է:

Վաղուց մտադրած էի հայ հասարակութեան յանձնել բանաստեղծին հոգեւոր ներշնչումներուն մարգարիտները, որոնք փայլատակում կու տան հեղինակին վաստակին, հրատարակուած տասնէ աւելի հատորներու մէջ:

Կը նահանջէի որոշումէս, այն մտավախութեամբ, թէ սխալ մը կը գործեմ իր համեստութիւնը խոցելով իմ գնահատումներովս:

Չէի համարձակեր յօդուածը հրատարակել առաջ՝ իր հաւանութիւնը առնել, մերժումի տարակուսանքէն խթանուած:

Ան տասնեակ տարիներ առաջ, էջերու ծաւալով գրախօսած էր գիրքերս, առանց իմ գիտակցութեանս եւ հիմա կարգը իմս էր, գրելու եւ գնահատելու իր գրական վաստակը, սրտիս համար անկեղծութեամբ: Պարտականութիւն մը, հաճելի, արդար եւ Աստուածահաճոյ:

Յաւալի է, որ այս սանձարձակ ժամանակներուն, ոսկի պատեհութիւնը կը տրուի շնորհագուրկ կիսագրագէտներուն, որ փառաւորուին ներբողալից ուղերձներով բեմերու բարձունքներէն եւ ծափահարուին որոտալի ժխորով իրենց... անապարծութիւնը:

Մեր վաստակաշատ բանաստեղծը իր քերթողական հատորներով գնահատուած անուն մըն է հայրենի եւ Սփիւռքի մտաւորական շրջանակներէ:

Կը կրօնաշունչ քերթուածները երկինքը կը բանան՝ քրիստոնեայ մարդոց կեանքին վերեւ, արևափառ ճառագայթներով:

Իր Աստուածախօս բառերը կը խօսին մեր հոգիներուն այնպիսի հզօր ու հաւատալի հաւատքով, որ կրնան բեւեռային սառնակոյտերը բեկանել ու հալենցնել, եթէ լսող ականջները ըլլան:

Եթէ գոյութիւն ունի բովանդակ հայութեան մէջ, իր նմանին նման՝ ջերմեռանդ բարեպաշտութեամբ հոգեւոր բանաստեղծ մը, մտքով եւ հոգիով Տիեզերքի Բագմաճառագայթ Փառքը գովերգող, պիտի ուզէի ճանչնալ զայն իր միացական, հոգեկան, բարոյական սրբութեան մէջ եւ համանուն յօդուածով գովերգել իր Քրիստոսանուէր կեանքը:

Գիտեմ որ մեր բանաստեղծին գրական ու բարոյական որակով՝ գոյութիւն չունի իր հաւասարագօրը, չբանալու աստիճան նօսրացած է քրիստոնեայ աշխարհին մէջ անոնց համրանքը:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՆՐԻ ՍԵՐՈԲԵԱՆ

ՇԱՅՐ ԻՍ

Երբ սաստկանում է կարօտն իմ սրտում
Ու հոգիս անհուն կարօտով լցունում
Այնժամ գիշերը իմ խորը քնում
Ուզում եմ տեսնել քեզ իմ երագում:

Քանզի երագս է միակ տեղն այն
Ուր քեզ կարող եմ տեսնել ու զգալ
Ու թուայ այնպէս կարծես թէ ոչինչ
Քեզ չի պատահել
Այլ դու պարգապէս ոչ թէ երագում
Այլ իրականում ինձ մօտ ես եկել:

ԻՆՉ Է ՍԵՐԸ

Սէրը ծագիկ է
Նուրբ թերթիկներով,
Բնութեան շնորհած
Պէս-պէս գոյներով.

Ու թէ որ հայուես
Դու կոշտ ձեռքերով.
Այն կը դալկանայ Ու սրտի
Խորում թախիծ կը մնայ:

ԿԵԱՆՔԻ ՅՈՒՇԵՐՈՎ

Ամէն ամէն ինչ փոխուում է կեանքում
Ոչինչ իր տեղը երբեք չի մնում
Սէրն էլ որ մոյմիսկ թուում է կայուն
Փոխուում դառնում է մէկ այլ զգացում
Կամ էլ մոռացում կեանքի ընթացում:

Յուշերն են միայն որ մեզ չեն լքում
Ապրում են երկար ու չեն ծերանում
Եւ ինչքան որ տարիքն առնում
Այնքան աւելի մեզ թանկ են թուում:

Ապրում են Երանայի մեծ մայր յուշերով
Գնում են անցեալ նրանց միջոցով
Եւ վերապրելով պահերը յուզիչ
Դառնում են մի պահ այն ինչ որ էին:

Եւ ինչքան որ մեծ տարիքն առնում
Այնքան յուշերով Երանայի են Երանում
Եւ այդ յուշերի ընդհանրացումով
Ապրած մեր կեանքի իմաստն հասկանում:

ԱՐՄԵՆՈՒԿԻ ԲՈՅԱՍԵԱՆ ՄԻԱՅՆ ՄԻ ԱՆՈՒՆ

Միայն մի անուն, սուկ մուրիական,
Շուրթերիմ վրայ յօղանցում է դեռ,
Ի՞նչ է սա արդեօք, երագ թէ տեսիլք
Թէ մի յայտնուրիւն, ինքս էլ չգիտեմ:

Գիտեմ միայն լաւ, որ թափառ կեանքում
Փնտրեցի ինչ-որ մի գեղեցիկ բան,
Որն աշխարհում մի երկիր է
Դրախտի չափ հաւասար:

Դա մեր փոքրիկ ոստանն է տաք,
Որ սնել է մայրաքար,
Գուրգուրել ու փայլալայել է
Իր գուսպ սիրով մայրական:

Չմնաղ ես դու հայրենի երկիր
Դու մեր իդանքի, երագանաճերի
Քաղցրիկ օրեւան,
Մի մեծ ու ուժեղ մագնիսի նման
Քաշում ես դէպ քեզ ամբողջ հայութեանն:

Հայութեան հայեացքի կեդրոնը դու ես
Յոյսերի ու երագանաճերի լուր կատարածուն,
Որքան էլ հեռու շինեմք քեզանից
Բայց միեւնոյնն է, սիրում ենք սիրում:

Դարուս բարքերու ներութեան
մէջ, ո՞ր քրիստոնեայ գրագէտը
կամ գիտունը պիտի խոնարհէր
գլուխը Աստուածաշունչ Մատեանին
վրայ եւ իր հոգեւոր ու մտքին
մէջ պիտի ներմուծէր Աստուծոյ
ոսկեբերան պատգամները:
Այն հոգեշարժ հաւատքը, գոր
ցոյց տուաւ Քրիստոս խաչին վրայ
բեւեռեալ, ոչ Հին Կտակարանի
Մարգարէները կրցան ներգգալ, ոչ
Նոր Կտակարանի Առաքելները,
ոչ Սուրբերը, ոչ մարտիրոսները,
ոչ հերոսները:

Մարդկային բոլոր գլուխներ
ըր, պարանոցային հակումով կը
խոնարհին ՈՍԿԻ ՀՈՐԹԻՆ առջեւ,
սատանային դրամանիշին ծարա
ւով:
Ժագ Ս. Յակոբեան չեմ ըսեր,
թէ իր կեանքով անմեղադրելի
ծնունդ մըն էր: Ան ալ մեղքեր
գործած է Նարեկացիին խոստովա
նութեամբ եւ մեղանշունով, բայց
իր բերեղացած հաւատքովը, յա
ջողած է ազատագրել հոգին մեղ
քից:
Շարք էջ 19

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՊԱՏՈՒՄԻ ԸՆԿՐՈՒՄ

ԳԵՂՈՐԳ ՔԻՐՈՍԻՏԻՆԵԱՆ

Պատմութեամբ արձակի ազնու-
ճագոյն ժանրն է, որի մէջ խտաց-
ուած կեանքը ընթերցողին հմա-
յում է իր ճշմարտացիութեամբ ու
խորթութեամբ լինելու: Մէկ կամ
մի քանի կերպարներ քանդակու-
մ են իրենց ոգեղէն իւրայատու-
թեամբ եւ կեանքի ընդգրկման
պարզութեամբ, միեւնոյն ժամա-
նակ՝ ակնթարթային խտացմամբ:
Հեղինակը որսում է իրադարձու-
թիւնը եւ պարփակում գրութեան
նեղ շրջանակում: Դա բանաստեղ-
ծական եւ գեղանկարչական ներշն-
չանքի պահ է: Այս սպաւորութիւնն
իմ մէջ թարմացաւ մեր օրերի
անզուգական արձակագիր, արձա-
կագրութեան վարպետ Ստեփան
Ալաջաջեանի վերջերս լոյս տեսած
«Պատուածքներ» ժողովածուի գոր-
ծերն ուսումնասիրելիս: Դրանք ու-
սումնասիրելի եւ ի ցոյց դնելու
իրաւ արժանի պատմութեան են,
յատկապէս մեր օրերում, երբ իս-
կական, գեղարուեստական փայլուն
յատկանիշներով օժտուած, պատ-
կերային հենքի վրայ հիւսուած
պատուածքի հազուադէպ են առնչ-
ուում: Խոր ընդհանրացման եւ մեծ
ճշմարտութեան բացահայտումը պա-
հանջում է ոչ միայն մտքի ու
զգամունքի ծայրաստիճան լարում,
այլեւ պայծառ ու լուսաւոր երե-
ւակայութիւն եւ ենթագիտակցու-
թեան տիրապետման շնորհներ,
որոնցմով օժտուած է Ստեփան
Ալաջաջեանը: Նա ժամանակին
առանձնացաւ իր խոհականութեամբ,
համապարփակ մտածողութեամբ,
թեմատիկ ինքնատիպութեամբ,
առողջ ազգայնականութեամբ, գու-
նազգացողութեան շուրջութեամբ,
որ թերեւս յատուկ էր իբրեւ միջին
արեւելեան:

Գիրքը բացում է գրողի հայ-
րենասիրական ձօն-հասկներով: Յե-
տոյ գալիս են երկու տասնեակ
հրաշալի պատմութեանք՝ գրուած
դասական մտածողութեամբ ու ինք-
նատիպ ոճով: Դրանց մեծ մասը
տարբեր ժամանակներում լոյս են
տեսել Հայաստանեան մամուլի էջե-
րում: Հեղինակի վկայութեամբ՝
դրանք համարում են վերջնական
տարբերակներ «Բոլորը վերանայ-
ուած, մշակուած ու ենթարկուած
են փոփոխութիւններին: Դա վերա-
բերում է ե՛ւ տեղանունների, ե՛ւ
կերպարներին, եւ շարադրանքին»:

Հատորը թեմատիկ առումով
բազմաբնոյթ է: Սփիւռեցահայի ճա-
կատագիր («Կէտը», «Մայրիկի
Համար», «Կալենի Տղան», Մօր աչ-
քերը») Հայրենիքի վերակառու-
ցում («Բաճկոնը», «Մեր Քարե-
րը», «Գուրգուրանք») ինքնամո-
ռաց սիրոյ եւ հոգեբանական գանա-
զան դրսեւորումներ, մարդ ու բնու-
թիւն, աղէտ ու երջանկութիւն,
աշխատանք ու կեանք, եւ այլ գեղա-
գիտական վսեմ խորարդներ, որոնք
մշակուած են բարդ ու խոր ենթա-
տեքստերով, պայծառ երեւակայու-
թեանը յատուկ պատկերաւորու-
թեամբ, բանաստեղծական շնչով ու
թոխիքների վեհութեամբ: Բառի
եւ պատկերի իւրայատուկ, հեղի-
նակային վերաբերմունք ու խնամք
է զգացում՝ նիւթի, կերպարի,
բնութեան գոյների ու ստուերների
նկարագրութիւններում: Ուզում եմ
անդրադառնալ սովորական, պատմ-
ութեամբ ժանրում աւանդական, բայց
խիստ դրամատիկ մի թեմայի ալա-
ջաջեանական մշակումին, մի փոք-

րիկ պատմութեամբ՝ «Հացը» որ
պատերազմական դրուագի հոգե-
բանական խորք ու խորհրդաւո-
րութիւն ունի: Ռազմաճակատի
առաջին գիծ, լարուածութիւնը
բնական է: Հակադիր դիրքերը
մօտ են: «Երեքն էին, եւ խրամա-
տում մնացել էին երկուսը՝ սոված
ու ծարաւ, այն էլ՝ ուղիղ մի բոքոն
հացի դիմաց...»: Արիստն ու վա-
սիլները: Երրորդը հացը բերող
Կուլեան է, որը, հացը գինակիցնե-
րի ձեռքը հասցնելուն մնացել էր
երկու-երեք մեթր, զոհուած է: Լու-
սարձակը պեղում է տեղանքը, կլա-
նում հացը, «ուտում է հացը»: Եթէ
Արիստը մի փոքր բարձրանայ,
ձեռքը մեկնի հացին, անպայման
թշնամու գնդակը կորսայ նրան:
Սովը, հացը, գնդակը, կեանքն ու
մահը գիրկընդհառն են: «Երկու-
եանի ձեռքից ճիշդ այն պահին,
երբ նա խրամատով անցնում ու
գոռում էր.

- Արիստակէս, բռնիր...»

Ծաւալում են դրամատիկ
պատկերները, ներքին, հոգեբանա-
կան երկխօսութեան տեսքով, պա-
տումի խիստ ծուլատող ելեւէջնե-
րով: Դեռ երէկ Կուլեան ասում էր
Արիստին, որ դու քեզ չես ճանաչի
հայելու մէջ: Որտեղի՞ց հայելի
գտներ Արիստը եւ միթէ՞ դա
կարելու էր այդ պահին, այդ
իրավիճակում: Մագալկալած, ցեխի
մէջ կորած գինուորը մի գերակայ
մտածում ունէր, հրետանին գայ,
թշնամուն ետ մղի, փրկի հացն ու
կեանքը: «Սա լինելու եւ չլինելու
սահմանագիծն է»: Հրետանին որո-
տում է յանկարծ, եւ վաշտը շարժ-
ում է առաջ: «Արիստին թուաց,
թէ ռազմագծով մէկ վագում է՝
ձեռքին աւտոմայ եւ ծոցում բոքոն
բռնած մի գինուոր...»: Իրակա-
նում ինքը՝ Արիստն էր այդ գի-
նուորը: Մի խօսքով՝ առաջ են
նետուած, վագում վաշտը, բանակը
լոյսը, որոտը, հացը, սովը, հոգին,
սիրտը, գիւղը, հողը, վերջապէս
միշտ անհոգ թուացող լեռները...
Առաջինը գիւղ է մտնում Արիստը,
կրակելով մտնում է մի տուն, մի
սենեակ. «Ներսում, պատի տակ,
դէմ առ դէմ տեսաւ մի ահաւոր
աւտոմատաւոր, կրակելու եւ յօշո-
տելու պատրաստ: Սեւացած դէմ-
քով մի մարդ, ահաւոր միրուքով,
վայրենի հայեացքով: Մարդը չուել
էր ոտքերն ու սարսափից հեռում
էր: Այդ նա էր, թշնամին...
զգզուած, ահաւոր, դիւային... դէմ-
քին՝ քարացած ատելութիւն... մի
վարչելի էակ, մի հրէշ, մի
ճիւղ...»:

Եւ կրակեց Արիստը, փշրեց
ամէն ինչ... Հանդարտուեց, սպառ-
ուեց... Եւ չետոյ տեսաւ փշրուած
հայելին եւ հասկացաւ, որ «իրեն
դէմ առ դէմ կանգնած է եղել ինքը,
այսինքն՝ կրակել եւ սպանել էր իր
լքուած հուլիւնը. ժպտաց, խո-
նարհեց գլուխը: Ճիշտ էր ասել
Կուլեան՝ հայելու մէջ դու քեզ չես
ճանաչի...»:

Յետոյ Արիստը դրսում նստում
է արեւոտ պատի տակ, բոքոնը
հանում ծոցից, դնում լուսաւոր
խոտերի վրայ ու շնչում:

- Հիմա լոյսի հետ միասին
կ'ուտենք հացը:

Ես ընդհանրապէս որեւէ գործ
վերլուծելիս խուսափում եմ հեղի-
նակից մէջլեբերումներ անելուց: Բայց
այդ դէպքում անհնար էր: Քանի որ
Ալաջաջեանից սեղմ, դիպուկ, ընդ-

կուն ու պատկերաւոր անհնար էր
խօսել, նկարագրել, տեղ հասցնել
միտքը: «Հացը» չորս էջանոց
պատմութեամբ արուած, գործում,
արարում է մի մեծ, անընդգրկելի
մի աշխարհ, մի թեմա, որ ուրիշի
մօտ կարող է ձգուել ու վէպի
տարածք գրաւել: Այստեղ պատկե-
րը, բառը հասուն մրգի պէս ճաքոմ
են: Տիեզերական ընդգրկում ունեն
Ալաջաջեանի հոգեբանական ներ-
սուզումները: Մարդու եւ հերոսի,
կերպարի ներաշխարհը խորն է,
անյատակ եւ իր մէջ ամփոփած է իր
ժամանակի, իր դարի, իր հասա-
րակութեան մեծ ու ամբողջական
պատկերը՝ հակասութիւններով, հա-
կադրութիւններով, գեղագիտականի
բոլոր մակարդակները՝ լաւն ու
վատը, գեղեցիկն ու սղեղը, մարդ-
կայինն ու հակամարդկայինը, հե-
րոսականն ու հակահերոսականը,
սէրն ու ատելութիւնը, հասարա-
կական ու անհատական բարդ կա-
ռուցը: Մեծ է ընդհանրացման ու-
ժը, որ գեղեարուեստական ստեղ-
ծագործութեան մտածական մա-
կարկին ապահովում է կայուն-
նութիւն ու յարատեւութիւն, ժա-
մանակին դիմանալու յատկութեան:
Այս առումով՝ մի քանի տասնեակ
տարիներ առաջ երկնած սոյն
պատմութեանքն ու նովելները այ-
սօր եւ վաղն էլ ընթերցողներու եւ
կլանող հետաքրքրութեամբ, պար-
գեւելով ոչ միայն գեղարգիտական
հաճոյք, այլեւ սերունդներ դաստի-
արակելու մեծ լիցքեր ունեն:

Ստեփան Ալաջաջեանի պատմ-
ութեանքն ու նովելները իրօք գրաւիչ է եւ
ինքնաբոլոր: Աշխույժ ու կայտառ,
կենդանի հմայքով լեցուն ոճ ունի,
նրա բառն ու բանը ջրդեղուած են
արեւով, լոյսով, աշխարհի բոյրե-
րով: Նրա սողերի թախիծն էլ

արեւահամ է, ճառագայթող, թարմ
ու ապրեցնող: Կերպար ու տիպ,
հերոս ու հակահերոս կերտելու
իւրատիպ գոյները ասես հողից,
որդան կարմիրից են ծնուած: Նիւ-
թը շունչ ու հոգի է առնում: Էակը
մոտմոտենտանում է եւ դառնում
համամարդկային ճառագող մեծու-
թիւն: Գրողի դասական պատմելա-
ձեւը նոր ու թարմ օրնամենտներով
է յագեցած եւ թուրքի թափ ու
խոյանքով թեւաւորուած: Պատմ-
ութեանքն անհրաժեշտ սեղի ու ժամանա-
կի զգացողութիւնը պատմականու-
թեան հենք ու դաշուածք ունի:
Իւրաքանչիւր պատմութեամբ քու-
յալուցութեան, գիւտի հրճուանքի
եւ հանդիպում: «Մայրիկի Հա-
մար», «Մօր աչքերը», «Աթե-
նան», «Գնացին աշխարհը փրկե-
լու», «Անունը», «Մեր Քարերը»,
«Ձայներ» պատմութեանքն ունեն
նովելային անակնկալներով կերտ-
ուած հրաշալի դրուագներ, որոնք
ընթերցողին գերում են պիւր լար-
ութեամբ, հոգեբանական ան-
սովոր լուծումներով, կենաց ու
յաւերժութեան սահմանագծում կի-
զող կենսականութեամբ:

Ստեփան Ալաջաջեանի սոյն
պատմութեանքն ու նովելները տասնեա-
կը ազգային ու համամարդկային
գեղագիտական մտածողութեան եւ
զգացական թարմութեան, հաւատի
ու սիրոյ, մարդկայինը վեհացնելու
յատկանիշներով են օժտուած:
Դրանք ապրող եւ ապրեցնող գե-
ղարուեստական արժեքներ են, որոնց
համար կարելի է նոր էջ բանալ
հայկական կարճ արձակի՝ պատմ-
ութեամբ ու նովելի ժանրում: Հեղի-
նակի այս եւ միւս գեղարուեստա-
կան յղացումները ունեն ապագայի
միտում եւ դիմացել ու դիմանալու
են ժամանակի քննութեանը:

ՄԱՐԶԱՇԽԱՐԿԻ ԱՆՈՒԱՆԻ ԸՆԿՐՈՒՄ

ԱՐԵՏԻՍ ԲԱՅՐԱՄԵԱՆ
ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ, 2005

Շնորհակալութեամբ ստա-
ցանք Աւետիս Բայրամեանի
«Մարգաշխարհի Անուանի Հայե-
րը», գիրքը, որ լոյս ընծայուած է
2005-ին, Լոս Անճելոս: 529 էջ,
1200 նկար եւ 1700 անուն պարու-
նակող՝ «Մասիս» շաբաթաթեր-
թիս սիւնակագիրներէն վահան
Բահարեանի խմբագրութեամբ
լոյս տեսած ներկայ հրատարա-
կութիւնը, իր տեսակին մէջ իւ-
րայատուկ է: Ան կեանքի կը կոչէ
անցեալ եւ ներկայ մարդական
աշխարհի անուանի՝ ներազգային
կամ համաշխարհային բարձր
վարկ վայելած կամ վայելող հա-
յագրի մարդիկները: Ան իր յար-
գանքի տուրք կը մատուցէ անոնց
բարձրորակ այլ յանդուգն իրա-
գործումներուն, մարդական բո-
լոր բնագաւառներէ ներս: Վեր-
ջապէս, ան դուրս կը բերէ գա-
նոնք մոռացութեան ճիրաններէն,
յանձնելու համար անմահութեան
պանթէոնին:



Շահեկան գիրք մը, ար-
դարեւ:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք
հայերէն գիրքեր,
եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ
Երիտասարդական Միութեան գրադարանին՝ ապա
անաքեցեք հետեւեալ հասցեով
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

ՐԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ԲԵՂՄՆԱԻՐ ԱՆՅԵԱԼ - ԼՈՒՍԱՇՈՂ ԱՊԱԳԱՅ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԷՋՆԵՐԷՆ ՔԱՂՆԵԾ ԵՆՈՎՔ ՊԱԼԻԿԵԱՆ

19րդ դարու կեսին սկսեալ, Թուրքիոյ մէջ հայ ժողովուրդին դրութիւնը հիմնովին յեղաշրջուած էր, աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ չարափոխուած էր, Թուրք պետութեան դաժան վերաբերմունքին, կոտորածներուն ու հալածանքներուն հետեւանքով: Հայաբնակ նահանգներու մէջ, 19րդ դարու վաթսուական թուականներէն սկսեալ, կրթական եւ տնտեսական վերականգնումի բոլոր ձեռնարկները առյաւէտ քանդուիլ սկսած էին: Աղքատութիւնն ու թշուառութիւնը համատարած էր:

Արտասահման փոխադրուած էր մտաւորական սերունդը, իր նշանաւորագոյն առաջնորդներով: Մամուլ ու գրականութիւնը կը ծաղկէին՝ բայց մայր հողէն դուրս: Կուսակցական անվերջանալի հակամարտութեանց պատճառաւ, ամէն գողութիւնը վէճերը սկսաւ ունենալու, առաւելագոյն քաղաքական գետնի վրայ: Միասիրտ ու միաբան հայութիւն չկար. կային միայն հայերու խումբեր, որոնք աւելի կը դժուարացնէին լուծումներ գտնելու կազմակերպուած աշխատանքներուն:

Սակայն կային մտաւորականներ եւ նոյնիսկ յեղափոխականներ, որոնք կը մտածէին համազգային կազմակերպութիւն մը ստեղծելու անհրաժեշտութեան մասին:

Ուշագրաւ է Արփար Արփիարեանի (գրող եւ քաղաքական գործիչ) 1904 Յունուար 6ի նամակը, որ զրկած էր վենետիկէն, որուն մէջ կը գրէր. «Կը խորհէի թէ արդեօք աւելի օգտակար պիտի չըլլա՞ր հիմնել Ազգային Ընկերութիւն մը, նպատակ ունենալով հայոց տնտեսական եւ մտաւորական զարգացման նպատակով, առանց սակայն քաղաքական ու յեղափոխական ձեռնարկներու: Շատ մտածեցի, սակայն յանգեցայ այն եզրակացութեան՝ թէ այդպիսի ընկերութիւն մը շատ արգելքներու պիտի հանդիպի, որոնց գլուխը պիտի ըլլայ, անշուշտ, գոյութիւն ունեցող կուսակցութեան կողմէ ձեռնարկէ՞մ ամենասատիկ հալածանքը, որ մինչեւ մարդասպանութիւն պիտի կարենայ յառաջանալ»: Արփիարեան խորապէս համոզուած էր այդ պայմաններով իսկ ստեղծուելիք կազմակերպութեան մը անհրաժեշտութեան: «Կուշտը կը հասկնա՞նք անօթիին վիճակէն»: Երաշք մը պէտք էր:

Այդ հրաշքը իրականացաւ. քաղքենիներու խումբ մը, 1906 Ապրիլ 15ին, Չատուկայ սուրբ օրը, տասը հոգիով գահիրէի մէջ հիմնեցին Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, բացարձակապէս ապաքաղաքական, համազգային բարեսիրական կազմակերպութիւն մը, որուն կրնար անդամակցիլ ամէն հայ՝ առանց սեռի, կրօնքի եւ դաւանանքի կամ համոզումի խտրականութեան: Հ.Բ.Ը. Միութիւնը ինք երբեք խտրականութիւն չէ դրած այս կամ այն խմբակցութեան հանդէպ: Հաւատարիմ իր հիմնական սկզբունքին, ան կը հետապնդէ միայն ու միայն իր ազգաշէն նպատակները:

Հ.Բ.Ը. Միութեան ծնունդը մեծ խանդավառութեամբ ընդունուեցաւ հայ երեք յարանուանու-

թիւններու կողմէ, որոնք անմիջապէս զրկեցին իրենց շնորհաւորական գրութիւնները, իրենց օրհնութիւնները եւ յաջողութեան մաղթանքները:

Վեհափառ Մ. Խրիմեան Հայերի, Կաթողիկոս Ամենայն Հայոց, Վեհափառ Սահակ Բ. Խապայեան, Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկոյ,

Գերշ. Պօղոս-Պետրոս ԺԳ. Թերզեան, Հայ Կաթողիկէ Կաթողիկոս-Պատրիարք Մեծի Տանն Կիլիկոյ,

Վերապատուելի Հայկազուն Եագուպեան, Հովուապետ Աւետարանական Համայնքի:

Ուշագրաւ է որ կուսակցութիւնները դժգոհութեամբ ընդունեցին (ինչպէս գուշակած էր Արփիարեան) այս համազգային միութեան հիմնումը, մտահոգուելով անոր անդամակցութեան եւ նիւթական բարգաւաճումի կարելիութիւններէն եւ անոր հզօրութենէն:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան հիմնադիրներէն ոչ մէկը քաղաքական կազմակերպութեան մը անդամ չէր:

Նախագահ Պօղոս Նուպար Փաշա - ճարտարագէտ, տնտեսագէտ, հնարիչ-գիւտարար,

Երուանդ Աղաթօն Պէյ - գիւղատնտես, տնտեսագէտ, երկրագործ,

Տօքթ. Նազարէթ Տաղաւարեան - բժիշկ, գիտնական, բանասէր,

Մկրտիչ Մարակօսֆ Պէյ - ճարտարապետ, երկրաչափ,

Գրիգոր Եղիայեան - Օրէնսդրագէտ, փաստաբան, դիւանագէտ,

Մկրտիչ Անդրանիկեան - տնտեսագէտ, հաշուապահ, վարիչ, Կարապետ Պէյ Շիրիտեան - դիւանագէտ, հնագէտ,

Յովհաննէս Յակոբեան - դիւանագէտ, պետական բարձր պաշտօնեայ,

Առաքել Նուպար - էլեւմտագէտ, հաշուապահ, գանձապետ:

Ինչ կը տեսնենք, հիմնադիրները բոլորն ալ մասնագէտներ էին՝ տնտեսագէտ, գործարար, դիւանագէտ, գիտնական, բժիշկ, ճարտարապետ, գիւղատնտես, եւ այլն:

Անոնք բոլոր ալ ծանօթ էին եւրոպական երկիրներու պատմութեան ու զարգացման պայմաններուն եւ յստակօրէն գիտէին մեր ժողովուրդի գոյատեւման, տնտեսական զարգացման եւ բարելաման կարելիութիւնները եւ ցանկալի միջոցները:

Յատկանշական է որ հիմնադիրներու մէջ կը բացակայէին բանաստեղծներ, ուսուցիչներ, գրողներ, որոնք նկատելիօրէն կը գտնուէին ազգային, քաղաքական գործունէութիւններու մէջ, առանց սակայն ունենալու այդ գործին համար անհրաժեշտ դիւանագիտական գիտելիքները ու պատրաստուածութիւնը:

1908ին, երբ հռչակուեցաւ օսմանեան սահմանադրութիւնը, Տօքթ. Նազարէթ Տաղաւարեան հրաժարեցաւ իր պաշտօնէն եւ մեկնեցաւ Պոլիս, որպէսզի կարենայ ազգային քաղաքական գործունէութեան նուիրուիլ: Ապագային իրեն միացան Նաեւ Ե. Աղաթօնը եւ Ա. Մկրտիչեանը, որոնք միասնաբար գործօն դեր ունեցան Սահմանադրական Ռամկավար կուսակցութեան հիմնումին մէջ: Շատ տրամաբար-

նական էր որ անոնք նախընթին նորաստեղծ միութիւնը, որ ոչ սոցիալիստ էր եւ ոչ ալ յեղափոխական, մեր միւս կուսակցութիւններուն նման:

Սահմանադրական Ռամկավարներու նպատակները, փիլիսոփայութիւնը շատ ալ տարբեր չէր Հ.Բ.Ը. Միութենէն: Բայց անոնք ունէին իրենց քաղաքական նպատակները՝ պահպանել հայուն քաղաքացիական իրաւունքները, պաշտպանել մայրենի հողը եւ խաղաղ միջոցներով ապահովել հայկական իշխանութիւնը:

Հ.Բ.Ը. Միութիւնը ըլլալով համազգային բարեսիրական կազմակերպութիւն մը, նպատակ ունէր գործել Թուրքիոյ սահմաններէն ներս գտնուող հայ բնակչութեան տնտեսական բարելաւումին ու բարգաւաճման համար: Նաեւ նպատակ ունէր ապահովելու այդ բնակչութեան հայրենաշինական, մշակութային եւ կրթական մարզերը:

Ն. Տաղաւարեան Հ.Բ.Ը.Մ.ի հիմնադիր անդամ էր: Ան շրջեցաւ Թուրքիոյ բոլոր հայաստան շրջանները եւ հիմնեց Հ.Բ.Ը.Մ.ի մասնաճիւղեր: 1913ին, Տաղաւարեանին նուիրուած յօդուածը կ'ըսէ. «Ան խաղաղ զարգացման ռահվիրաներէն էր ու կը հաւատար որ կարելի պիտի ըլլայ հայապահպանումը եւ հայրենաշինութիւնը» Հ.Բ.Ը. Միութեան հետ գործակցաբար: Դժբախտաբար, այս խաղաղ զարգացման ռահվիրան, անձնագոհութեան հերոսը, նահատակուեցաւ Թուրք ցեղասպաններու ձեռքով: Ան եղաւ Հ.Բ.Ը. Միութեան առաջին նահատակներէն մէկը:

1908ին, երբ Տաղաւարեան հրաժարեցաւ Միութեան իր Ատենադպիրի պաշտօնէն, իր տեղ հրաւիրուեցաւ բանաստեղծ Վահան Մալէգեանը, որ 1909 Մայիս 23ի Ընդհանուր ժողովին ընտրուեցաւ Կեդրոնի անդամ եւ Ատենադպիր: Ան եղաւ Միութեան պատուիրակ, գործեց 1908էն մինչեւ 1947: Անոր նուիրեալ աշխատանքը եւ նպատակը Հ.Բ.Ը. Միութեան եղաւ անգնահատելի: Ան շրջեցաւ գաղութէ գաղութ, երկրէ երկիր եւ հիմնեց մասնաճիւղեր, կազմակերպեց, ներշնչեց ու իր հետ նուիրեալներու խումբ մը Հ.Բ.Ը. Միութիւնը դարձուցին հայկական ամենամեծ համազգային բարեսիրական կազմակերպութիւնը:

Հ.Բ.Ը. Միութիւնը ունեցաւ բազմաթիւ գործիչներ ու ղեկավարներ, ինչպէս Արշակ Զօպանեան, Վահան Թէքէեան, Հրաչ Երուանդ, Ռուբէն Հերեան եւ ուրիշներ, որոնք անսակարկ նուիրուածով ծառայութիւն մատուցին Հ.Բ.Ը. Միութեան:

Հ.Բ.Ը. Միութիւնը արհաւիրքի եւ թշուառութեան մատնուած հայ աստանդական ժողովուրդին համար ստեղծեց համազգային այնպիսի ոյժ մը՝ որուն շնորհիւ կարելի եղաւ ապահովել համերաշխութիւն՝ բարեգործութեան եւ ազգաշինութեան բարձրագոյն նպատակները ազգովին հետապնդելու եւ իրականացնելու նշանաբանով:

Առաջնորդուած ազգային գերագոյն շահերէն, Հ.Բ.Ը. Միութիւնը բարոյապէս եւ նիւթապէս օժանդակած է թէ՛ Արեւելեան եւ թէ՛ Արեւմտեան Հայաստանի շրջաններուն մէջ հերոսաբար պայքարող բոլոր կամաւորական շարժումներուն անխտիր: Համազգային այս մեծ միութեան շարքերուն մէջ եղած են Հնչակեաններ, Դաշնակցականներ եւ Ռամկավարներ, որոնք հասունութիւնը ունեցած են իրենց հատուածական շահերէն վեր դասել համազգային շահերը՝ ազգապահպանումի սիրոյն:

Հ.Բ.Ը. Միութիւնը համազգային ապաքաղաքական կազմակերպութիւն մըն է, բայց ոչ չէճոք. ունի իր ազգային յստակ ուղղութիւնը, եւ անոր միակ տէրը ժողովուրդն է, իր Առաքելական, Կաթողիկէ եւ Աւետարանական համայնքներով, որոնք կ'ընդգրկեն ամբողջութիւնը հայ ժողովուրդին: Ան չունի ոչ մէկ ծառայ, այլ կ'ընդունի միայն նուիրեալ, անսակարկ ու առանց ակնկալութեան ծառայութիւն:

Հ.Բ.Ը. Միութիւնը միշտ պատրաստակամ եղած է գործակցելու հայկական բոլոր կուսակցութիւններուն հետ՝ հայկերտումի, հայրենաշինութեան, եկեղեցական ու ազգային միասնականութիւն ապահովելու իտէյալով: Ան կը հաւատայ որ այս իտէյալը կարելի է իրականացնել, եթէ մեր քաղաքական կազմակերպութիւնները հայ ժողովուրդի գերագոյն շահերը նկատեն աւելի առաջնահերթ՝ քան իրենց կազմակերպութիւններուն:

Հ.Բ.Ը. Միութիւնը հիմնուեցաւ 100 տարիներ առաջ, մեր ազգին ու հայրենիքին վրայ խոժող չարաբաստիկ դժբախտութեանց դէմ դնելու համար: 100 տարիներ շարունակ մաքաւեցաւ իր միջոցներուն ներած չափով, ի նպաստ հայրենի հողին հաւատարիմ մնացող հայրենակիցներուն, ինչպէս նաեւ աշխարհի գանազան երկիրներուն մէջ ապաստան գտած ազգակիցներուն: Ուր որ ազգային խղճմտանքը խռովող կարիքը կայ, ուր որ ազգային գործ կատարելու հնարաւորութիւն կ'ընծայուի, Հ.Բ.Ը. Միութիւնը միշտ պատրաստ է հոն՝ խօսքէ աւելի գործով:

**ՔԱՋ ՆԱԶԱՐ
ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ԾՕ**

Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 11:00-ից 1:00
Կլէմտէյի 26-րդ կայանից

ԹՈՒՐԵՐՈՒՆ՝ ԹՈՒՐԲԻԱՆ ԹՐՔԱՑՆԵԼՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Շաբաթնակուած էջ 13-էն

շատ աւելի ձայն եւ քաղաքական ազդեցութիւն ունի, քան լայնախոհ շրջանակը: Այս անհանդուրժող, յետադիմական, թապուներու ետին պահուած շրջանակը չկրցաւ ուրանալ 6-7 Սեպտեմբերի դէպքերը, սակայն պատմութիւնը շրջելու աստիճանին հասած լրբութեամբ կը պնդէ, թէ հայկական ցեղասպանութիւն չէ եղած:

Միջազգային հանրային բացասական կարծիքը փոխելու միտումով, դէպքերէն միջոց մը վերջ, աղէտեալներուն անբաւարար՝ կորուստին մօտաւորապէս 30 տոկոսին համապատասխանող, հատուցումներ եղան: Հատուցումները վճարելու նպատակով հանրապետութեան նախագահի հովանաւորութեամբ յանձնախումբ կազմուեցաւ, որ երկու տարուայ ընթացքին դրամատուներէ եւ մեծ հաստատութիւններէ մօտաւորապէս 9 միլիոն լիւրա նուիրատուութիւն հաւաքեց: (48)

Հատուցում ստացողներէն գրաւոր հաւաստիք պահանջուեցաւ, թէ իրենց կորուստին ըման փոխարժէքը ստացած էին ու յառաջիկային հատուցում պահանջելու համար որեւէ տեղ դիմում պիտի չկատարէին: (49) Յանձնախումբը, ի միջի այլոց, 3 հազ վարժարանի 150-500 լիւրա եւ աղջկանց կարուճեւի վարժարանին ալ 2000 լիւրա հատուցում տուաւ: (50)

1946ին, Կիպրոսի մէջ թուրքերու եւ յոյներու միջեւ կացութիւնն ալ աւելի պրկուեցաւ: Թուրք կառավարութիւնը, առիթէն օգտուելով, Թուրքիա բնակող յունահայատակները երկրէն դուրս հանելու համար, 1930-ին Յունաստանի հետ ստո-

րագրուած յունահայատակներուն թուրքիոյ մէջ եւ թրքահայատակներուն ալ Յունաստանի մէջ աշխատելու իրաւունք տուող համաձայնութիւնը՝ «Իքսմէթ, Թիւարէթ վէ Սէյրիսեֆանին» կոչեալ համաձայնութիւնը 16 Մարտ 1964 թուականին միակողմանի կերպով ջնջեց: Ութը օր ետք, առեւտրական հրապարակը թրքացնելու միտումով, ինը յունահայատակ գործատէրերու հրահանգուեցաւ 15 օրուայ մէջ իրենց գործատէրիները փակել: Առաջին հերթին 150 յունահայատակ գործատէրեր երկրէն դուրս հանուեցան: Այդ թուականին Կ. Պոլսոյ Առեւտարականներու Սենեակին արձանագրուած 1000 յունահայատակ գործատէր կար: Կառավարութիւնը նախ արգիլեց որ այս մարդոց անշարժ կալուածները ծախուին, ապա անոնց դրամատուներու մէջի հաշիւները ասուցուց: Մինչեւ 1965ի առաջին կէսը, 12592 յունահայատակ երկրէն դուրս հանուեցաւ: Այս յունահայատակները թրքահայատակ յոյներու հետ տուան տեղ կազմած էին, որով մօտ 30 հազար յոյն թուրքիացիներ հեռացաւ: (51)

Այսօր, 6-7 Սեպտեմբերի դէպքերէն 50 տարի ետք, թէեւ ցաւերը որոշ չափով մեղմացած են, սակայն վէրքը տակաւին չէ բուժուած: 6-7 Սեպտեմբերի այս բարբարոսական դէպքերուն համար թուրքիոյ կառավարութիւններէն ոչ մին ցարդ պաշտօնապէս ներողութիւն խնդրած է:

Թուրքիոյ օրէնքները, յատկապէս փոքրամասնութիւնները շահագրգռող օրէնքները, բաղդատմամբ Եւրոպական Միութեան երկիրներու օրէնքներուն, չափազանց նախնական են: Եւրոմիութեան հետ բանակցութիւններու սկսելու հա-

մար է, որ կարգ մը օրէնքներ բարեփոխութեան ենթարկուեցան, սակայն անոնք կը մնան թուրքի վրայ: Ոմանք բնաւ չփոխուեցան: Երկրին մէջ տակաւին խօսքի, կարծիք յայտնելու ազատութիւնը չկայ: Որեւէ հարցով պետութեան տեսակէտին հակառակ արտայայտուող անձ ինքզինք դատարանը կը գտնէ:

Կայսրութեան շրջանին օսմանեան վերնախաւը կ'ուզէր հաւատալ, թէ «օսմանցի» կոչուած ժողովուրդ մը կար: Այսօր ալ հանրապետական թուրքիոյ մէջ տիրապետող նոյն մտածելակերպն է, սա տարբերութեամբ որ փոխանակ «օսմանցի» բառին, կը գործածուի «թուրք բառը: Թուրքիոյ ընկերվարական կուսակցութեան ղեկավարը՝ Տենիզ Պալթալ, որ անցեալին նախարարաց խորհուրդի անդամ ալ եղած էր, 2005ի Նոյեմբերի 29ին, իր կուսակցական խմբակի ժողովին կ'ըսէ. «Թուրքիոյ հանրապետութեան մէջ միայն մէկ ազգ կայ եւ ատիկա ալ թուրք ազգն է»:

Թուրքիոյ Հանրապետութեան ղեկավարութիւնը տակաւին չէ կրցած իւրացնել այն իրողութիւնը, թէ թուրքիա միայն թուրքերուն երկիրը չէ: Հոն, թուրքերու կողքին կան

չէչէններ, ալեւիններ, լազեր, չերքէզներ, ասորիներ, պոչնակներ, արաբներ, քսան միլիոն քիւրտեր, 1915ին մահմետականացած, առեւանգուով մահմետականացուած կամ մահմետականներէ որդեգրուած հայերու շառաւիղը (մէկ միլիոն, կամ աւելի) եւ Լօզանի Դաշնագրով պաշտօնապէս փոքրամասնութիւն նկատուող, հայեր, յոյներ, հրեաներ: Այս բազմազգ իրողութիւնը առանց նկատի առնելու նման յայտարարութիւն կատարել նեղմտութիւն է, ազգայնամոլութիւն է:

Բոլոր անոնք, որոնք իրենց մայրենի լեզուն սորվելու առիթն ու կարելիութիւնը չեն ունեցած, որով ստիպողաբար թրքերէն կը խօսին, թուրք նկատել կարելի չէ: Բոլոր անոնք, որոնք մահմետական են ու թուրքին հետ իրենց կապը միայն ու միայն կրօնակից ըլլալու հանգամանքն է, անոնք ալ թուրք համարել կարելի չէ:

Օսմանեան Կայսրութեան փլուզման պատճառներէն մին թուրք վերնախաւին ազգայնամոլութիւնն էր: Այսօր, հանրապետական թուրքիոյ ղեկավարութիւնն ալ նման ընթացք որդեգրած է:

(Շաբաթնակելի 4 եւ վերջ)

- 42. «Իսթանպուլտա, Տիյարպաքրտա Ագալըրբէն», էջ 21
- 43. «6-7 էլիլի Օլայլարը - Ֆոթոկրաֆիլար - Պելկէլէր...», էջ IX եւ «Թոփուլմալ Թարիհ», էջ 39
- 44. «Իսթանպուլտա, Տիյարպաքրտա Ագալըրբէն», էջ 16 եւ 20
- 45. 6-7 էլիլի Օլայլարը», էջ 39
- 46. Նոյն, էջ 35 եւ 36
- 47. «Իսթանպուլտա, Տիյարպաքրտա Ագալըրբէն», էջ 21
- 48. «6-7 էլիլի Օլայլարը», էջ 41, 42
- 49. Նոյն, էջ 43
- 50. Նոյն, էջ 45, 46
- 51. «Հաքըրլիտրում...», էջ 115, 116



WAHIB'S MIDDLE EAST RESTAURANT
"Where the East Meets the West"

MEDITERRANEAN - LEBANESE FOOD

BANQUET HALL

CATERING FOR ALL OCCASIONS

FAMILY ENTERTAINMENT

EVERY FRIDAY & SATURDAY NIGHT INTERNATIONAL & ARABIC SHOW



ENJOY THE FOOD ALONG WITH THE LIVE MUSIC

CALL FOR RESERVATIONS
TEL 626-281-1006 626-587-1048
FAX 626-281-3641

910 E. MAIN ALHAMBRA, CA



BELLY DANCING

NAZO, VARTAN, AMIR & SINGER MUHAMMAD

ՄԵՆ ՄՏԱՐԳՈՒԹԻՒՆ

Շարունակում է 6-Էջ

նին, Ալ. Մարգարեանին և շատ ուրիշներին:

Իմ այն հարցին, թե՛ այդ որտեղի՞ց գիտե՞ք, որ ժամանակակից արևելահայ գրական լեզուն երկբարբառներ չունի, նա պատասխանեց.

— Մենք չենք սովորել...

— Բայց չէ՞ որ խաչատուր Աբովեանից, Ստեփանոս Նազարեանից, Միքայել Նալբանդեանից սկսած մինչև Յովհաննէս Թումանյան, Նիկոլ Աղբալեան, Լևոն Շանթ, Աւետիս Ահարոնեան, Ստեփան Զօրեան ու Աւետիք Իսահակեան, Նժդեհն ու Շահումեանը իրենց գրական արևելահայերէնում ունեն բոլոր երկբարբառները — և այսօր էլ արևելահայ լեզուով գրող կոստան Զարեանն ու Յակոբ Կարապետեանը, պարսկահայ գրողներ Միրզաբեանը, Վարանդը, Դևր, Գարօնէն, Անդ. Մարեանը կիրառում են բոլոր երկբարբառները, — նա պատասխանեց.

— Նրանք սովետահայ գրողներ չեն:

— Բայց չէ՞ որ այդ երկբարբառները եղել են ու կան արևելահայ ժամանակակից գրական լեզուով գրողների ստեղծագործութիւններում:

— Չենք սովորել: Մեր դասագրքերում չկան:

Ճիշտ էր ասում: Ազնիւ ու անկեղծ:

Տասնեակ դպրոցներում հարիւրաւոր աշակերտների ենք հարցրել, թե՛ ի՞նչ է երկբարբառը, քանի՞ երկբարբառ, այսինքն՝ երկ-ձայն, երկձայնաւոր գիտեն, պատասխան չենք ստացել: Երևի երեք սերունդ անգիտացաւ նախա-սովետական աշխարհագրի մեր ուղղագրութիւնը, նրա տարրողականութիւնը և երաժշտականութիւնը՝ անգիտանալով երկբարբառները:

— Այդ ինչպէ՞ս է, որ հնդերոպական ընտանիքին պատկանող բոլոր լեզուները երկբարբառներ ունեն, իսկ ժամանակակից արևելահայ գրական լեզուն, որ նոյնպէս պատկանում է հնդերոպական ընտանիքին, չունի:

— Չեմ կարողանում պատասխանել, մեղադրեալ չեմ փնտռում, իմ ուժերից վեր է...

էլի անկեղծ էր ու ազնիւ:

Միայն 1986թ. նոյն Հայաստանի Սովետական Հանրապետության 12-րդ հատորի էջ 242, սիւնակ 3, Ուղղագրութիւն բառի շարադրանքում Ս. Գյուլբուրգովեանն յայտարարեց, որ «1922-40 թթ. ՀՍՍՀ-ում (և ՍՍՀՄ-ի ամբողջ տարածքում) հատուկ որոշմամբ... հայերենից հանվում են է, օ, ւ տառերը... և եա, իւ երկհնչիւնները գրվում են յա, յու տառակապակցութիւններով»:

Մուսլ որոշում: Որովհետեւ եա, իա երկու ձայնաւորներ են մի հնչոյթով, իսկ յա, յու մի բաղաձայն, մի ձայնաւոր:

Երեք տա՞ռ հանել հայոց այբուբենից, երեքն էլ երկբարբառներ կազմողներ. է, օ, ւ... ձայնաւորներ:

Դա վերաբերում է 1922-ի Մարտի 4-ի դեկրետին, իսկ դեկրետը որոշում է, այլ հրամանագիր է, կտրուկ և պարտադրական: Դա ռազմապետական Սովետական Հայաստանի դեկրետն էր, երբ որպէս սոցիալիստական հանրապետութիւն 15 ամսական էր, իսկ այսօրուայ մեր անկախ հան-

րապետութիւնը 15 տարեկան է: Եւ այդ դեկրետով խզում առաջացաւ նախասովետական արևելահայ գրական լեզուի ուղղագրութեան և սովետական շրջանի արևելահայ գրական լեզուի ուղղագրութեան միջև:

Արևելահայ գրական մեր սքանչելի լեզուի ուղղագրութիւնը բաժանուեց 1922-ի դեկրետով:

1922-ի բարեփոխութեամբ՝ Յես երգում էլի որորոցային յերգ.

Վորովհետեւ մերս էր այն երգում ամեն օր

Մարտի 8-ը կանանց օրն է:

1940-ին մասնակի բարեփոխութեամբ (սրբագրութեամբ)՝

Ես երգում էի մեկ օրորոցային երգ.

Որովհետեւ մերս էր այն երգում ամեն օր

Մարտի 8-ը կանանց օրն է:

Արևմտահայ գրական լեզուի ուղղագրութիւնը, որ միացեալ նոյն աշխարհաբար ուղղագրութիւնն էր արևելահայերէն գրականի հետ, պահպանեց աշխարհաբարը: Խօսքը արևելահայերէն երկփեղկուած ուղղագրութեան մասին է:

Ճիշտ էր դիրքաւորուել Հրանտ Պետրոսեանը: Պէտք էր մեղադրեալներ որոնել-գտնել: Այդ դեկրետը Լենինի ծրագրի մի մասն էր, այն ծրագրի, ուր ասում էր. «Կուլտուրական յեղափոխութիւնը սկսվում է բանվոր դասակարգի կողմից իշխանութիւնը նուաճելուց յետոյ» (տես ՀՄՀ Հ VI, էջ 7): Մշակույթի յեղափոխութիւն, ուղղագրութեան փոփոխութիւն:

Կուլտուրական յեղափոխութիւն, ռազմական կոմունիզմ, պրոլետարական դիկտատուրա... Հնի կործանում, նորի կերտում...

Եւ դա չպէտք է կապել որեւէ մէկի անուն հետ, ոչ Մանուկ Աբեղեանի, որ կողմնակից էր բարեփոխութեան, բայց ոչ այս ձևի, և ոչ էլ Պօղոս Մակինցեանի, որ լատինական տառերը շալակած եկաւ Հայաստան՝ իբրև Համենիօֆի էսպերանտոն բերելու:

Դա ժամանակի, նոր հասարակարգի բերած սարսափի ու փոխուող վարչակարգի պարտադրանքն էր:

Այդ ուղղագրութիւնը պիտի կոչել սովետական ուղղագրութիւն. եթէ ամէն ինչ կոչում էր սովետական գրականութիւն, սովետական ճարտարապետութիւն, սովետական բժշկութիւն, սովետական գրող, սովետական երաժիշտ, ապա ինչո՞ւ ուղղագրութիւնը չկոչել...: Ոչ մի սովետական ուղղագրութիւնը սովետական ուղղագրութիւնը:

Սովետականը մեզ քաղաքներ ու գործարաններ բերեց, ջրանցքներ ու փապուղիներ, գիտութիւն և համալսարաններ, օպերա ու թատրոններ, մի խօսքով մի պետականութեան մէջ ի մի բերուած ունեցուածք տուեց, և տուեց նաև այս շատ սրբագրելի ուղղագրութիւնը և կոչեց նոր, իսկ նախասովետականը՝ հին...

Ուղղագրութիւնները չեն հնանում, դրանք գիր են և յաւերժական են, բայց բարեփոխութիւններն էլ բացառուած չեն:

Ժամանակն է պահանջում, որ «երաժշտական ձայներին նմանուող և մեր ձայնաւորների թուին պատկանող» երկբարբառները վերականգնելով՝ չհեռանանք հնդերոպական լեզուների ընտանիքից: Դրանց օգնութեամբ շատ աւելի լաւ ու շուտ կը տիրապետենք

«ԱԶԳԱՊԱՏՈՒՄ»Ի ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Շարունակում է 7-Էջ

աղբիւր մըն ալ հապճեպ կերպով, շատ անխնամ, հրապարակ ելած էր Ստեփան Ստեփանեանցի կողմէ «Հայ Եկեղեցին Ստալինեան Բռնատիրութեան Օրօք» անունով, որ կարեւոր եւ յաւելեալ տեղեկութիւններ կը հաղորդէր, երբեմն չլսուած եւ բոլորովին գաղտնի մանրամասնութիւններով, միշտ արխիւալին աղբիւրները նշելով:

Տրամադրութեանս տակ կար նաև 300-ի մօտ պատճենները այլազան նամակներու, կոնդակներու, հաղորդագրութեանց, ատենագրութեանց եւ մանր մուկեր դէպքերու, զորս յատուկ կարգադրութեամբ Գարեգին Արքեպ. Ներսիսեան, ներկայիս Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց, Երեւանէն պատրաստել տուած էր Ս. Մեսրոպ Մաշտոցի անունան Մատենադարանին մէջ և ուղարկեց գործիս պատրաստութեան համար: Կար նաև Ֆելիքս Գորլիի «Հայ Եկեղեցին Սովետական Դրութեան Ներքեւ» անվերջն առանձնատիպը, ինչպէս նաև Դերենիկ Եպիսկոպոսի «Յերկիր Հայրենի» արժէքաւոր հատորը, որոնք կարեւոր մասամբ օժանդակեցին յաւելեալ նիւթեր եւ բացատրութիւններ հայթայթելով:

Խորէն Ա. Մուրատբեգեան կաթողիկոսի օրով, երբ ամէն ինչ ի Հայաստան եւ ի Մայր Աթոռ մուսլ էր, անյուս եւ կործանարար, երբ հայ եկեղեցիներ Երեւանի մէջ կը բռնազրաւուէին, Ս. էջմիածնի կալուածները կը գրաւուէին, հոգեւորականներ կը հալածուէին ու կ'ստորուէին, սուրբ հայրապետը, որուն երկու հարագատ Մուրատբեգեան եղբայրները՝ Սերգէյ եւ Լևոն բռնամահ եղան իր իսկ, բռնամահ նահատակութեանն առաջ, կաթողիկոսը կը մտածէր Հայ Եկեղեցոյ բարեկարգութեան մասին ու գործնական քայլեր կ'առնէր Գերագոյն Հոգեւոր Խորհուրդին հետ միասին, ՉեկոՒՅՈՒՄ կոչուած երկար ծրագիրը մշակելով որպէս հիմնանիւթ, կ'ուղարկէր գայն Երուսաղէմի լուսամիտ եւ հմուտ Թորգոմ Գուշակ-

եան պատրիարքին առ ի քննութիւն, որ իր կարգին կը յղէր գայն Անթիլիաս եւ Կ. Պոլիս, ինչպէս նաև արտասահմանի թեմերուն առ ի տեղեկութիւն: Գուշակեան, ի պատիւ իրեն ըսած եմ արդէն, եղաւ միակը իր ժամանակի առաջնորդող դէմքերէն, որ լրջօրէն եւ քննադատական ոգիով, եպիսկոպոսական ժողովէ մը աւելի ձեռներեցութեամբ ուսումնասիրեց «Չեկուցում»ը եւ լայն ու լրիւ խմբագրականներով անդրադարձաւ իւրաքանչիւր ինդրին «Սիոն» ամսագրի յաջորդական թիւերուն մէջ: Իմ կարգին ես ալ գանոնք հետեւողական կերպով վերլուծեցի իմ հայեցակէտովս:

Եթէ Մայր Աթոռ Ս. էջմիածին կը կարծէինք թէ լուռ կը մնար, ահա Հայ Եկեղեցոյ բարեկարգութեան գծով, Հայերէն Աստուածաշունչի թարգմանութեան 1500 ամեակի հռչակումով եւ այլ կարեւոր առիթներով, կը բարձրացնէր իր ձայնը կորովի եւ անվախ կերպով: Արտասահմանը անշուշտ Երուսաղէմով եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեամբ իր պարտքը լաւագոյնս կը կատարէր Մայր Աթոռի նուաղեալ ձայնը աւելի լսելի դարձնելու համար, անոր նախամեծար հեղինակութիւնը միշտ յարգելով բանիւ եւ գործով, մինչև Գէորգ Զ կաթողիկոսի ընտրութիւնը եւ օծումը ի ներկայութեան եւ ձեռամբ մեծ հոգեւորական Տ.Տ. Գարեգին Ա. Յովսէփեանց Կիլիկիոյ կաթողիկոսին: Մայր Աթոռ Գէորգ Զ ամենայն հայոց կաթողիկոսով, Անթիլիաս Գարեգին Ա կաթողիկոսով, Երուսաղէմ Թորգոմ, Մեսրոպ եւ Կիւրեղ պատրիարքներով, եւ Կ. Պոլիս խաչատուրեան Գարեգին պատրիարքով, կ'ապահովէին Հայ Եկեղեցոյ գոյութիւնն ու ամբողջութիւնը Խորհրդային Հայաստանի աննպաստ պատուարներուն դիմաց: Ահա հոս է որ կը յանգի «Ազգապատում»ի երկրորդ հատորը, որմէ ետք պիտի պայծառանար Հայ Եկեղեցին լուսամիտ դէմքովն ու իմաստուն եւ երկարատեւ առաջնորդութեամբը Տ.Տ. Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Եւրոպական լեզուներին:

Դա ազգի շահերն են պահանջում, անկախ պետականութեան շահերը — մէկ ազգ, մէկ մշակույթ — մէկ գրականութեամբ հոգեւոր կապեր ունենալն է կարեւորագոյնը. նոյնանման, մէկ ուղղագրութիւնը մշակույթի մեծ ուժ է:

Պետական լեզու հռչակուած հայերէնը պէտք է ունենայ մէկ ընդհանուր, համահայկական ուղ-

ղագրութիւն, բոլորի համար, բոլոր ժամանակների համար, և դրան ընդառաջ պէտք է գնան ամէնից առաջ և ամէնից շուտ հայրենի մտաւորականները, կրթական հաստատութիւնները, ամէն տեսակի հրատարակչութիւնների ու հրապարակումների ղեկավարները, հնդերոպական լեզուով Եւրոպային միանալ ցանկացողները:

Ո՞ւր էք, հայ լեզուաբաններ:

«ՆՈՐ ՄԵՐՈՒՆԴ»
ՇԵՌՈՒՄՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ
CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ
(ԿԼԵՆՏԵՅԼ, ՊՈՐՊԵԼԵ, ԼԱ ԲՐԵՍԵՆՅԱ)
ԳԻՆԳՉԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00

Http://www.massisweekly.com

Ի ՍԿԶԲԱՆԷ ՕՐՇՆՈՒԱԾ Է ԲԱՐԻՆ

Շարունակում է ը 8-էն

խօսքը իրօք, որ քան կը պատշաճի Տօքթորներ Նագարէթ եւ Անի Տարագճեան ամուսին: Երեք առիթներով անոնք իրենց շքեղ բնակարանի դռները լայն բանալով կազմակերպած են հրաշալի երեկոյթներ, որոնք 19րդ դարու պալատական փարթամ հիւրասիրութիւնները կը յիշեցնեն, որպէսզի օգտակար ըլլան Լարքին ու Լարքի ծրագիրներուն:

Այս անգամ կրկին ընդունելութիւնը կազմակերպուած էր «Դիլիջան»ի երկրորդ համերգաշրջանին համար: Հրաւիրուած էր երաժշտասէրներու ստուար խումբ մը, որ կլէնտէլի «կապուտակ, լուսավառ եւ ժպտուն» համալսարանները վայելելէ ետք, սրտերուն քնարական թրթիռը արթնցած, հրաւիրուեցաւ ունկնդրելու «Դիլիջան»ի բարձրակարգ երաժիշտներուն ընտիր մատուցումները: Արուեստը մշակուած մտքերու համար, մտքի գարգացման հետ, գեղագիտական հաճոյքի աղբիւր է, եւ ոչ թէ միայն գուարճութեան առիթ: Արուեստը թէ՛ արհեստ է, թէ՛ մասնագիտութիւն:

Դիլիջանի վարիչ Մարմնի նախագահ, Տօքթ. Նագարէթ Տարագճեանի բարի գալուստի ջերմ ու հակիրճ խօսքէն ետք, բեմ հրաւիրուեցաւ Դիլիջանի գեղարուեստական ղեկավար, արդէն բոլորիս ծանօթ եւ սիրուած արուեստագէտ՝ Չութակահար Մովսէս Պօղոսեանը, որ բացատրութիւններ տուաւ «Դիլիջան»ի յառաջիկայ տարուան համերգաշարի մասին: Արուեստագէտը ներկայացուց երկրորդ համերգաշրջանի յայտագիրը նշելով ծրագրի բազմաժանր ըլլալը, կատարուելիք գործերու ընտրողական բնոյթը, համերգաշարի նպատակը, որ կը ձգտի ներկայացնել ժամանակակից հայ հեղինակներու գործերը միջազգային գլուխ գործոցներու շարքին, բարձրագոյն կարգի հայ կամ ոչ-հայ արուեստագէտներու կատարումներով: Յառաջիկայ տարուան ծրագրին մէջ շատ ուրախալի էր տեսնել, ի շարս այլ հայ արուեստագէտներու, հայգագի երկու մեծեր՝ ալթահար Քիմ Քաշաշեանի, եւ Չութակահարուհի Անի Գավաֆեանի անունները: Ակնկառուց կը սպասենք լսելու աւագ եւ միջին սերունդի հայ հեղինակներու գործերը, հայ մենակատարներու աւելի ընդլայնուած ցանկով մը: Պօղոսեան երախտագիտական խօսքեր ուղղեց Տօքթ. Տարագճեանին եւ վաչէ Պարսումեանին իրենց նեցուկին համար:

Ապա ներկաները ականջալուր եղան մի քանի կարճ երրեակներու՝ Խաչատուրեանէն, Մանսուրեանէն, Սթրավինսքիէն, որոնք մատուցուեցան բարձր ճաշակով:

Փրոֆ. Օշին Քէշիշեան, իր սովորական հաղորդական մէջբերումներով շարունակեց յայտագիրը, պարզելով երեկոյի միտք բանին, որ էր նիւթական նեցուկը յաջորդ համերգաշրջանին համար: Նիւթականի անհրաժեշտութիւնը որեւէ գործի մէջ անոր յաջողութեան գրաւականն է: Խանդավառուած իր ստեղծած անկեղծ եւ մտերիմ մթնոլորտէն, ներկաներ մեծ ոգեւորութեամբ արձագանգեցին «տամատա»յի հրաւերին. «Ձեզուն աւելին հողերուն տակ պայթեցուցնելու» ղ, եւ «յորդեցան ցորեաններն աղածրի» (մատղայ): Հիւրասրահը շէնցաւ յառաջիկայ տարուան գորավիզ կանգնելու խոստումներով եւ գոյացաւ պատկառելի գումար՝ շուրջ \$40,000:

Երեկոյթի պաշտօնական բաժինը փակեց վաչէ Պարսումեանը, որ իր կարճ խօսքին մէջ ամփոփեց Դիլիջանի ներկայացուցած կարեւորութիւնը հայ գաղութին ու անոր դիմագծի բարենպաստ երանգաւորման համար. ան երախտագիտական խօսքեր բաշխեց հոն գտնուող երաժիշտներու՝ Տիկ. Արտեմիա Պետրոսին, Տիկ. Անգինէ Մուրատեանին, Տիկ. Վիքի Բարեանին, Պրն. Հրանդ Աղպապեանին, գանոնք կոչելով ուսուցիչները, որոնք երաժշտական ասպարէզէն ներս Լոս Անճելըսի գաղութին մէջ տարած են կարեւորագոյն աշխատանք, եւ բարձրագոյնը գնահատեց անոնց ներկայութիւնը եւ նեցուկը Լարքի տարած աշխատանքին:

Ներկաները ապա հրաւիրուեցան ճոխ հիւրասիրութեան: Հոգեպէս հարստանալէ ու բաւարարուելէ ետք, ներկաներու քիմքեր ալ գոհացան Շահան Տէր-Օհաննէսեանի պատրաստած ճոխ, ընտիր ու համադամ խորտիկներով: Ակնահաճոյ սեղանին վրայի տեսակաւոր պնակներէն բաւարարուեցան երաժշտութեան ազդեցութեամբ կրկին սրուած ստամոքսները:

Կոչականները ուշ գիշերին գոհունակ սրտերով բաժնուեցան: Հոփանաւորները իրենց գումարները վստահեցան Լարքին հաւատքով, եւ ակնկառուց սպասելով յառաջիկայ տարուան Դիլիջանի գեղեցիկ համերգներուն:

ԲԱՆԱՍՏԵՐԾ ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

Շարունակում է ը 14-էն

քին կապանքներէն:

Իրաւամբ ըսուած է, թէ երգը բնութեան լեզուն է, հոգիին գերագոյն արտայայտութիւնը, տիեզերքի ձայնը, անհունին բարբառը եւ Աստուծոյ կանչը:

Ժագ Յակոբեան բառահարուստ եւ բառակերտիչ քերթող մըն է, իր գեղագիտական եւ գերգագայուն իր գրական երկերով:

Իր հաւատքին, մտքին ու հոգիին շնորհները կը ցոլան գրութիւններուն մէջ ճաճանչագեղ հրապոյցով, ըլլան քերթուած ու արձակ գրութիւն:

Լեզուն հիասքանչ, ոճը իւրայատուկ, բառերու տողանցքը երաժշտական, մտածումները պատկերալից եւ ամէն ինչ իր ինքնութեանէն բխած:

Քերթողական արուեստին հմտութիւնը տիրական, որ վաւերական կը դարձնէ իր մտային արտադրութիւնները:

Կը հաւատայ անմահութեան գաղափարին, բնագանցական ճշմարտութիւններու, բարոյական օրէնքներու եւ Տիեզերակալ Աստուծոյ Գոյութեան, որպէս երկրի ու երկնքի Արարիչ:

Այս անհերքելի հաւատքով անած ու ջահաւորած է իր մտաշխարհը եւ հոգեւոր կենսաբան:

Աշխատած է, որ Աստուծոյ շնորհած թանկագին ժամանակէն բոլորով մը պարապութեան մէջ չկորսուի:

Իր հոգիին անհուն տարածքներուն վրայ կը տեսնես միայն առաքինութեան ծաղկաստաններ: Փոքր հողաշերտ մը պարապ չէ թողած, որ մեղքը երեւայ իր փուշերով:

Իր գագացումները տաք ու հաղորդական են, իր խոհերը եւ համոզումները գրաւիչ, իր ընտանեկան եւ ընկերային յարաբերու-

թիւնները վստահելի: Առեւտրական աշխարհի մէջ արհամարհեց շահաբեր պատեհութիւնները, որով կրնար իր համեստ տան՝ դղեակի մը շքեղութիւնը տալ, եթէ ինքն ալ հետամուտ ըլլար, անիրաւ շահերու մէջ հերոսանալու:

Ես կոչեմ եմ իր բարեպաշտութիւնը ընդոծին, համաժողովուրդ իր հոգիին հետ, ուր կը գահակալէ Աստուած եւ Հայրական գորովալից յորդորներով ուղղութիւն կու տայ իր կենսաքին:

Իր բոլոր քերթուածներուն մէջ կ'իշխէ նորին գեղեցկութիւնը, ամէն գաղափար ու պատկեր իրն է, իր ինքնութեանէն բացալայտուած, հայերէն լեզուի գոհար բառերով:

Ան հագուագիւտ բարեկամ մըն է ինծի, Աստուծոյ ընտրեալ ձեռակերտը, իր բանաւոր արարածը, իր շնորհագարդ հոգիովը, իր նմանութեամբ:

Ինչ որ կը խօսի ու կը գրէ երկնային արտայայտութիւններ են, աւետարանաշունչ եւ հայրենաշունչ: Ոչ մէկ բառ անձնասիրական եւ ետական, որ իր բարոյականը ստուերոտէ:

Ինծի գարմանալի կը թուի, թէ արհեստով դեղագործ այս բանաստեղծը, որ շուկայի ապականած ետեղեղին մէջ, ի՞նչպէս յաջողած է անարատ եւ անառիկ պահել իր հաւատքին բերդը մեղքին ներխուժումէն:

Այսօր Աստուծոյ գոյութիւնը ժխտող եւ մեղքին չարագործութիւնները ծափահարող անբարիշտները՝ աստղային թիւ կը կազմեն:

Ժագ Ս. Յակոբեան անկախ մտածող մըն է, կը պատկանի Աստուծոյ հոգեւոր Հօտին եւ մարդկային հասարակութեան:

Աստուած իր յաւիտենական Հայրն է եւ Գողգոթայի Անկեղծ Դատապարտեալը իր անգուգակալ փրկիչը:

ՅԱԲԱԿՑՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Մ.ի լաւագոյն կիսապաշտպաններէն ՊԱՐԳԵԻ ՇԸՆԻՏԸՄԵԱՆԻ մահուան տխուր առթիւ Հ.Մ.Մ.ի վարչութիւնը իր խորագգաց ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year) * \$50,00 for USA * \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada. * \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel :----- Fax :-----

Ձեր Ծանուցումները վստահեցէք «Մասիս» շաբաթաթերթին

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
Սահակ Թուրքեանի
«ԱՐԵՒԸ ԼԵՈՒՆ
ԵՏԻՆ»
Հայրենական
Օրագիրը

Ստանալու համար
դիմել հեղինակիմ՝
Հեռ. (818) 563-6174

կամ հետեւեալ
գրախանութները
Կլէմտէյի մէջ
Ապրիլ՝ (818) 213-4112
Պերմ՝ (818) 244-3830
Սարդարապատ՝
(818) 500-0790

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION



Բեղմնաւոր Անցեալ. Լուսաշող Ապագայ:
Proud Past, Exciting Future.



AGBU PASADENA HIGH SCHOOL

Affiliated with AGBU Manoogian-Demirdjian School

REGISTRATIONS FOR 2006-2007 IN PROGRESS

- High School Prep grade (8th grade equivalent)
 - Ninth grade
 - Tenth grade
 - Eleventh grade
- First graduating senior class in June, 2008

AGBU High School in Pasadena will provide...

- A challenging college preparatory program in a safe, caring and supportive environment
- Honors and Advanced Placement classes for accelerated students
- Qualified and experienced faculty dedicated to student learning
- Instruction in Armenian language, history and culture
- Small class sizes and low teacher to student ratio
- Professional guidance and counseling
- Affordable tuition fees

Call (818) 883-5379, (626) 794-0363, or (818) 883-2428 for immediate assistance

2495 E. Mountain Avenue, Pasadena, CA 91107

(Corner of Altadena and Mountain)

www.agbuphs.org

AGBU CENTENNIAL SPONSOR



6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • commercecasino.com